



1067

L III-6





ԱՌԻՐԱԿՆԻ ՀԻՆԳԵՐՈՐԴ

Ազգային, Գիտական, Գրական եւ Քաղաքական

ԻԳ. ՏԱՐԻ — ԹԻԻ 1

||

1 ՅՈՒՆՎԱՐ 1905

ԲՈՎԱՆ ԳԱԿՈՒ ԻԻՐՆ

«ԲԻՐԱԿՆԻ ՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԵՇՐՁԱՆԻՆ ԱՌԻԹՈՎ
 ՆՈՐ ՏԱՐԻ
 ՆՈՐ ՏԱՐԻ
 ԸՆԹԱՑԻԿ ՆԻԻԹԵՐ.—Վասնուած ժամեր
 ԲՐԻՍՏՈՆԷՈՒԲԵԱՆ ԿԵՆՍԱԿԱՆ ՉՕՐՈՒԹԻՒՆԸ
 Ս. ԳԻՐԲԸ ՀԱԻԱՏՔ ՊԱՀԱՆՋՈՂ ԻՐՈՂՈՒԹԻՒՆ ՄԸ
 (Թարգմ.Ս. Պ. ՄԱՆՈՒԿԵԱՆ)
 ՏԱՐԵՄՈՒՏԸ
 ԼԵՉՈՒԱԿԱՆ ՀԱՐՑ ՄԸ
 ՈՒՂԵՒՈՐԱԿԱՆ ՏՊԱՒՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—Ալպեացիները,
 Մօն Պլանք, Հիմալայան
 ՇԱԲՈՒԱՆ ՆՕԹԵՐ
 ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻՆ ՄԷՉ

ՅԱԿՈՐՈՍ Հ. ՃԷՃԻՉԵԱՆ
 ՓԱՌՆԱԿ ԻՍԲԷՆՏԷՐԵԱՆ
 ՀԱՅԿ ԱԳՈՆՑ
 ՅԱԿՈՐՈՍ Հ. ՃԷՃԻՉԵԱՆ
 ՏՕՔԹ. ԴՅԻԻԹ ԳՐԷԿ
 ՌՕՄԱՆ Տ. ԽՈՍՐՈՎ
 ՅՈՎՀ. Ս. ԱԼԻԲՍԱՆԵԱՆ
 ՉՍՐԼՍ ՄԱԲՈՒԷԼ



Հատր 40 փայրա



Չեռփի, ոսփի եւ ձեռփի ու ոսփի
մրանգամայն մեքենաներ
կը գտնուին

Անկարելի է որ ընտանիք մը առանց կարի մեքենայի մնայ, բայց էական կէտն է լաւ մեքենայ մը ունենալ, որ վնասե լաւ մեքենայ մը անթիւ եւ անհամար ծառայութիւններ կը մատուցանէ, մինչդեռ գէշ տեսակէ մեքենայ մը անվերջ դժգոհութեանց եւ տաղտուկի աղբիւր մըն է :

Բոլոր աշխարհ գիտէ թէ՛

Ս Ի Ն Կ Է Ր,

մեքենան լաւագոյնն է. այս մեքենան ամենէն աւելի կատարելագործուածը, հաստատունը եւ դիւրագործածելին ըլլալուն՝ բովանդակ աշխարհի մէջ ամէն ոք Սինկերի մեքենաները կը գնէ :

Սինկերի մեքենաները կը ձախուին միմիայն Սինկեր Ընկերութեան վաճառատներուն մէջ՝

ՆԱԲԱՐԱՆ
Մ Ա Ս Ն Ա Ր Վ Ճ Ա Ր Ո Ւ Մ Ն Ե Ր

ԲԵՐԱ, Մեծ փողոց, կալաթա Սէրայի Լիսէին դիմաց.


ԿԱԼԱԹԱ 1. Սինկեր խան, Թիւնէլին ճեմարան.
2. Գարաքէօյ, Թրամվէյին կայարանին դիմաց.

ՊՈԼԻՍ 1. Սուլթան համամ.
2. Սուլթան Պայազիտ. (17—50)

Դասերը եւ նորոգութիւնները ձրի.

Կասարեալ երաւիաւորութիւն

Մասնանիղե գաւառներու բոլոր քաղաքներուն մէջ



Ազգային, Գիտական, Գրական եւ Քաղաքական

ԻԳ. ՏԱՐԻ — ԹԻԻ 1

||

1 ՅՈՒՆՎԱՐ 1905

ՌԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԾԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

1. ԲԻԻՐԱԿՆ Շարքաբերքի Տարեկան բաժնեգինն է Պոլսոյ եւ Գաւառներու համար 50 դրօ., Արսասան-ճանի համար 5 բուլլի, կամ 12 Էրանք կամ 2 1/2 տոլար, քրքատուրեան ծախք մեր վրայ: — 2. Չեռէ կը ծախուի հասք 40 փարայի: — 3. ԲԻԻՐԱԿՆ յի վերաբերեալ բաժանորդագին, նամակ կամ ո եւ է գրութիւն պէտք է ուղղել Կ. Պոլիս, Պայալ Հաուսի միջոցաւ՝ Խոպէրդ Գօլէն, Բրօժ. Յակոբոս Հ. Ճէնիգեանի: — 4. Անվճար նամակ կամ գրութիւն չընդունուիր: — 5. Տար օրինակի բաժանորդ գնողին մէկ օրինակ նուէր կը տրուի:

“ԲԻԻՐԱԿՆ”Ի ՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԵՇՐՋԱՆԻՆ ԱՌԻԹՈՎ

1904 տարին լրումով՝ Բիւրակն կը թեւակոխէ իր Հինգերորդ Տարեշրջանը, յարատեւ ու անսայթաք:

Լրագրական մեր այս ձեռնարկին ընթացքին, վստահօրէն ընթերցողները կրցան տեսնել թէ, վարանստ ու խարխարուն քայլերու չէ՛ որ յանձնուած է Բիւրակնի ճակատագիրը, եւ անոր նշանաբանին մէջ կարեւոր տեղ մը կը բռնէ յարատեւութեան ու օրըստօրէական զարգացման ոգին:

Գանգատի մը բնոյթը. չպիտի ունենայ անշուշտ, երբ ըսենք թէ, լրագրական այս գործին ընթացքին, ունեցանք նիւթականի տեսաչէտով դժուարութիւններ, քանի որ բաժանորդներէ շատեր միշտ դանդաղութիւն մը ցոյց կուտան իրենց վճարումներուն մէջ:

Բայց մենք միշտ փափաքող՝ առաջադրած մեր գործին մէջ յարատեւելու, օ՛ր մը չզգացուցինք այդ դժուարութիւնները ընթերցողներուն, ամէն շաբթու կանոնաւորաբար իրենց ձեռքը հասցնելով թերթը:

Այսօր երբ կը թեւակոխենք Հինգերորդ Տարեշրջանը, ուրախ ենք յայտարարելու որ, շատ աւելի վստահ ոգեւորութեամբ մըն է որ մեր քայլերը կ'ուղղենք դէպի 1905 թուականը, հաստատ համոզումը ունենալով թէ, շատ աւելի փայլուն ու զարգացուն նշան մը պիտի կրնանք բոլորել, ապահոված ըլլալով աշխատակցութիւնը կարող

ու ձեռնհաս գրիչներու, և ծրագրած ըլլալով խմբագրական ուղղութիւններ, որոնք վտահ ենք թէ համակիր ընդունելութիւն մը պիտի գտնեն ընթացողներուն կողմէ:

Բիւրակնի փայլուն ու յաջող շրջան մը ունենալուն վտահ երաշխաւորութիւն մըն ալ են այն համակրական, գնահատական ու շնորհաւորական նամակները, զորս կը ստանանք Նոր Տարեշրջանին առիթով, եւ այն քաջալերիչ հոգածութիւնները՝ որոնց աւարկայ կը դարձընեն թերթը մեր բարեկամներէն ու գործակալներէն շատեր, տարածել ջանալով Բիւրակնը իրենց շրջանակին մէջ:

Շնորհակալութիւն՝ այդ տեսակ գործնականապէս համակիր անձնաւորութեանց, որոնց հետեւողներ անսնել, փափաքելի է միշտ, զարգացումին նպաստած ըլլալու համար այն գործին, որ համայնքին Մտաւորական Աշխատութեան ծառայելու նպատակը ունեցող ձեռնարկ մըն է:

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Ն Ո Ր Տ Ա Ր Ի

Տիեզերքին հսկայ ժամացոյցը կրկին կը հնչէ իր ահեղագոչ ձայնով, եւ ահա տարի մըն ալ թաւալզլոր կ'իյնայ անցեալին անհուն խորութեան մէջ:

Մեզի մահկանացուներուս համար, որ կը բնակինք այս մեր բազմատարար փոքրիկ մոլորակին վրայ, սեծ ու կարեւոր շրջան մըն է որ կը կատարուի այսպէս: Մեր աշխարհը անհունութեան մէջ սաւառներով՝ արեգակին բոցաճաճանչ գունտին շուրջը՝ ճեղքելով անջրպետի մթին ու անսեսանելի կոհակները՝ բոլորեց աւարտեց այն շրջանը, զոր մենք տարի կ'անուանենք, ու՛այս շրջանը՝ որչափ ալ որ կարեւոր ու նաև բազմատարար ահագին շրջան մըն է, տիեզերքի մէջ գտնուած ուրիշ շրջաններու հետ բազմաթիւ շնչին բան մըն է: Մեր անհուն տիեզերքին ամէնէն հրաշալի բաներէն են այն զանազան շրջանները՝ որոնք կը կատարուին տիեզերքի գունտերէն եւ ամէնքը տարբեր տարբեր տեսողութեամբ: Այս շրջաններուն, այս հիացուցիչ թաւալումներուն համար՝ երկաթեայ ուղիներ չկան երկինքներուն մէջ, անհունութեան վրայ շինուած: Չկայ երբեք տեսանելի բան մը զանոնք իրենց ճամբուն, իրենց ընթացքին

մէջ անսասան պահելու համար: Անոնք ազատարար կը շարժին անջրպետին մէջ, կը թռչին, կը սաւառնին զէպ յառաջ, անվրէպ ճշգրութեամբ կատարելով իրենց հսկայ շրջանները: Անոնց մէջ կան գունտեր որ քանի մը ժամէն կ'աւարտեն իրենց շրջանը, և կան որ միլիոնաւոր տարիներու մէջ կրնան աւարտել: Երբ աչքերնիս երկինքն ի վեր յառնեմ՝ հոն կապոյտին վրայ կը տեսնենք ժամանակը, որ շօշափելի կ'ըլլայ ալ կարծես ժամանակը, այն թանկագին, այն անբացատրելի եւ ամենանրբին բանը՝ հոն տիեզերքին մէջ կը շինուի: Անհուն գունտերը, անհուն արեւներն են որ՝ կը շինեն ժամանակը մեր գործածութեան համար: Եւ հոն կ'իրականանայ Աստուծոյ համար ըսուած այն խօսքը թէ՛ իր առջեւ հազար տարին մէկ օրուան պէս ու մէկ օրը հազար տարուան պէս է: Հոնտեղ տարիներ կան, որ շին նմանիք մեր տարիներուն, հազարաւոր ու միլիոնաւոր տարիներուն չափ են, եւ օրեր կան որ հազար տարուան չափ ու ակելի երկայն են: 1847ին երկինքին վրայ երեցող զիսաւորը՝ իր մէկ շրջանը պիտի կրնայ կատարել 100,000 տարուան մէջ. այդ է իր տարին, եւ այդքան երկար տարիներէ վերջ

է որ կրկին պիտի երեւայ երկինքներուն վրայ, կան տակաւին ուրիշներ որոնք մէկ շրջան մը կտտարելու համար միլիոնաւոր տարիներու պէտք ունին: Ուստի երբ մենք այսօր մեր բազմատարար կարծուկ տարին կ'աւարտենք, ու ան' երկար ժամանակ մը կ'երեւի մեր մահկանացու աչքերուն, պէտք է դարձնենք աչքերնիս տիեզերքի այն մեծ ու զարմանալի ժամացոյցին՝ զոր Ամենակալ Աստուածը կախեր է մեր գլխուն վերեւ, ու մտածենք թէ ի՞նչ ժամանակներ կան հոն երկինքը ինչ անհատնում, անվերջ տարիներ, ինչ հսկայ շրջաններ, ինչ անհուն դարեր, որ իբր թէ Արարիչը հոն զբոշմեր է մեզի գէթ աղօտ գաղափար մը՝ տալու համար Յաւիտենականութեան նկատմամբ: Ո՛հ, Յաւիտենականութիւնը որպէս թէ հոն մօզի ցոյց կուտայ գէթ իր ոսկեփայլ եզրերը՝ ու ու մենք ժամանակի այդ անհունութեանց մէջ գրեթէ ընկղմած ու չլմորած՝ կ'զգանք թէ արդէն կոխած ենք անոր արուարձաններուն կամ յետին եզրըններուն վրայ, ժամանակը վերէն, այդ անհունութիւններէն կուգայ մոզի՝ ու ան վերստին կը մօտեցնէ կը կապէ մեզ Յաւիտենականութեան հետ: Մեր տարիները որքան չնչին, անընշան վայրկեաններու կը փոխուին տիեզերքի այդ վիթխարի տարիներուն քով, ու նոյն ատեն որքան կարեւորութիւն կ'ստանան այն անհուն տարիներուն ու շրջաններուն մէկ մասը կազմելով ու անոնց հետ կցուելով: Մեր բնական փոքրիկ գունտը՝ որչափ ալ որ աննշան այն մեծութեանց քով, շատ կը մեծնայ ու կը փառաւորուի այնքան անհուն ու փառաւոր տիեզերքի մը մէկ մասը կազմելով, նոյնպէս ալ մեր երկրաւոր կարճ ժամանակները, կարճ տարիները՝ կցուելով, մաս կազմելով՝ անհուն կարեւորութիւն կ'ստանան, քանի որ կցուած ու մաս կազմած են այն անվերջ, անհատնում տարիներուն հետ՝ որոնք լուսեղէն, անջնջելի գծերով հոն՝ վերը քանդակուած կը կենան մեր աչքերուն առջեւ: Մեր տա-

րիները՝ կարճ, վաղանցիկ եւ արագասլաց, թող իրենց վաղքին մէջ վեր առնել տան մ'որ աչքերը՝ մատնանիչ ընելով մեզի շողջողուն Յաւիտենականութիւնը՝ որ հազարաւոր, միլիոնաւոր արեւներու լոյսով կը փայլի հոն վերը:

ՅԱԿՈՐՈՍ Հ. ՃԻՃԷՋԵԱՆ

Ն Ո Ր Տ Ա Ր Ի

Յաւիտենական էակին խորհրդաւոր տնօրէնութեամբ, Ամանորի շքեղ արեւին թարմ ճառագայթները բովանդակ մարդկութեան ամէն խաւերը վերստին լուսադարձեց: Նոր Տարին ոսկիէ պատմուճան մը հագաւ և Ամենակալ Արարիչին ձեռքերուն մէջ արծաթի մը պէս կը շողայ: Անոր առաջին օրը հրեղէն սիւնի մը պէս միայնակ կայնած ամբողջ տարին կը լուսավառէ: Անոր առաջին շաբաթը՝ իր երկրպագութեան եւ երախտագիտութեան հոգեւոր բուրումներովը ամբողջ տարուան մթնոլորտը կ'ողողէ: Նոր տարին իր մէջը ունի մարգարէութիւնը այն հոգեւոր վերակենդանութեան որ անհրաժեշտապէս պէտք է անմահ հոգիներուն: Ան՝ հաւատացեալները յաւիտենական արշալոյսի ցոլքերով կը պիճնազարդէ եւ զանոնք հետզհետէ յաւիտենականութեան անվախճան եզրերուն կը հասցնէ: Ան՝ իբրեւ աստուածավառ լապտեր, հրեշտակատեսիլ արարածները ժամանակի արագավազ ընթացքին մէջէն երկնային դրախտին ծայրը կ'առաջնորդէ: Յաւիտենական սուրբ տաճարին նախադուռն է ան:

Ամենակալը՝ անհուն սիրոյ անսպառ աղբիւրը, Ամանորին ճակտին վրայ ոսկեղէն գիրերով, «պէտք է զայն Տէրօջը ընդունելի տարի մը ընել» գրելով, բովանդակ մարդկութեան ձրիաբար կ'ընծայէ: 1904 տարիին ամիսները, օրերը, ժամերը վայրկեանի մը պէս արագ արագ թռան, ոմանց ժպիտ, ու մանց դաւ թողլով եւ ժամանակի անհուն

միջէանի յատակը բողբոջն ալ գլորեցան: Սա-
 կայն Նոր Տարիին ոսկի ճաճանչները ամէ-
 նուն ալ վերստին յոյս ու սէր եւ հուր ու
 խանդ ներշնչեց: Իտալացի փիլիսոփայ մը
 ըսէ. «ժամանակը գանձերուն ամէնէն
 թանկագինն է: Թանկագին գոհարները իսկ
 ժամանակին հետ չեն կրնար բաղդատուիլ:
 մեծ Պարգեւատուն՝ ժամանակին երկու
 վայրկեանները մէկէն մեզ շտար: Զանոնք
 մէկիկ մէկիկ մեր վրայ կը թափէ, որպէսզի
 ի որին իմաստութեամբ գործածենք զանոնք:
 ժամանակը կեանքի գիրք մըն է, շատեր
 անկէ իմաստութիւն կը սորվին: Ան՝ կենաց
 ճառ է, շատեր անոյ՝ պտուղներ կը բաղեն
 անկէ: Աստեանի կեանքը՝ ոսկեղէն սանդուխ
 էրն է. բազմաթիւ մարդիկ անոր միջոցով
 զգեւոր իրական փառքերու բարձրագոյն
 գոտարները կ'ելլեն:

Ժամանակի շարաշար գործածութեան
 ղէմ ոչ թէ միայն արդի հաւատացեալները,
 ի նախնի հեթանոսներն իսկ բարձրաստի
 ղը բողբոջեն: Վաղեմի Եօթը գիտուններէն
 իրթթակոս կ'ըսէ. «ժամանակը ճանչցիր,
 որ մէկ վայրկեանն իսկ մի կորսնցներ»:
 իրոն՝ մարդու մը համար աշխարհի վրայ
 անէն դժուարին բանը ի՞նչ է հարցումին,
 պատասխանեց թէ՛ «իր ժամանակը ամէնէն
 թանկերպով գործածելը գիտնալն է»:
 Միակ բանը որուն ամէնէն շատ կը ցան-
 ասք՝ անցեալ ժամանակն է, նոյն ատեն
 թանկան ամենայն շոյլութեամբ կը վատ-
 անք» կ'ըսէ Սենեկա: Կատոն ալ, ոչ թէ
 միայն աշխատութեան ժամերուն այլ պա-
 բապ անցուած ժամերուն համար ալ հաշիւ
 քը տրուելուն պէտքին վրայ կը խօսի: Այս
 հեթանոս գիտունները դատաստանին մեծ
 օրը, ոչ թէ միայն Արքիմէդէսի ղէմ պիտի
 իւտին որ երբ Սիրակուսա քաղաքը առնուե-
 ցաւ ինք գետնին վրայ գիծեր կը քաշէր,
 ոյլ ամէն կարգի մարդոց ղէմ, որ փոխանակ
 իրենց ոսկի ժամերը լաւագոյն կերպով գոր-
 ձածելու, գինիի բաժակներով, ունայն
 փռքերով եւ պիղծ կեանքերով կը վատ-
 անէ:

Դեռահաս երիտասարդներէ շատեր, մեծ
 կարեւորութիւն կ'ընծայեն բաղդին: Սա-
 կայն ընդհակառակը, արուեստներու, գրա-
 կանութեան, գիտութեան եւ առաքինու-
 թեան մէջ ամէնէն փայլուն անձնաւորու-
 թիւնները՝ անձնուրաց եւ աշխատասէր
 մարդիկը եղած են: Անոնք ժամանակը իբրև
 գրամազլուխ դործածելով իրենց անունները
 անմահացուցած են: Միջավայրն ու սլատե-
 հութիւնը մասամբ կը նպաստեն մեր բարե-
 բաստութեանը. իսկ յաջողութեան իրական
 գաղտնիքը մեր ներսիդին է. հրավառ հո-
 գիի մը մէջ է ան: Կէօթէ կ'ըսէ. «կեանքը՝
 մեր առջեւ կը կենայ, ինչպէս ահագին քա-
 ռահանք մը ճարտարապետին առջեւ. ճար-
 տարապետ անունին արժանի է այն անձը,
 որ ճարտար ձեռքերով այդ անկերպարան
 զանգուածէն ժամանակի ընթացքին մէջ կըր-
 նայ արտադրել գեղանի՝ կերտուածք մը՝ ո-
 ղուն օրինակը նոյն իսկ իր հոգիին մէջ ծա-
 գոււմ առած է»:

Մարդը՝ Ամենակային առջեւը մեծ եւ
 լիւեմ է: Պէտք է որ ինքն ալ ամէն բան մեծ
 եւ վսեմ տեսնէ: Պէտք է որ մարդը, Հո-
 մերոսի պէս տիեզերքի հրաշալիքները հիա-
 ցուժով դիտէ: Պէտք է որ Շէքսպիրի
 պէս մարդկային հոգիին խորագոյն ծալքե-
 րուն թափանցէ, եւ Վիքթոր Հիւկոյի պէս
 մարդկային բնութեան ամէն սկարութիւն-
 ները քննէ եւ ամէն մեծութիւնները ճանչ-
 նայ: Եթէ յաւիտենական էակը մեր կեան-
 քերը խնայէ, Ամանորը իր ափին մէջ 8760
 ժամեր ունի ամէն մարդու համար: Մարդը,
 որ «արարչագործութեան պսակ» տիտղոսին
 արժանացած է, պէտք է այդ ոսկի ժամերը
 մեծ եւ բարի դործերով լեցնէ: Կեանքի
 պայքարին մէջ բարեպատե՛հ ճակատագիրի
 մը հիմերը զնելու համար Նոր Տարիին սկիզ-
 քը՝ նեոֆնանայեցութիւն եւ օրգանայեցութիւն
 բուռած երկու կարեւոր բաներուն պէտք է
 ամէն մարդ գերազանցօրէն ուշադրութիւն
 ընծայէ: Ներքնահայեցութիւնով մեր հոգի-
 ներուն լաւագոյն մասերը երեւան կուզան:
 Շատեր սահմանափակ միտքերով ապրելով

ստորինին կը յարին: Երբ կեսար տեսաւ թէ Հռոմի մէջ բազմաթիւ կիներ իրենց ժամանակին մեծ մասը շուներու եւ կատուներու հետ խաղալով կ'անցընէին՝ բնականաբար իրաւունք ունեցաւ սա հարցումը ընելու թէ՛ «արդեօք այս երկրին կիները զաւակներ չունի՞ն»: Իրաւամբ վսեմին, գեղեցիկն եւ բարիին գերագոյն ընտրութիւնը՝ ինքնաճանաչումէն կախում ունի: Սովորաբար «ծանիր գըեզ» դարաւոր բանաձեւը՝ բանական էակներու մէջ ներքնահայեցութեան ոգին Ամանորի առթիւ պէտք է նորէն հրահրէ: Գալով չըջահայեցութեան, Շէյքսպիր հետեւեալ կերպով կը բացատրէ զայն: «Երբ տուն մը կառուցանել մտադրենք, նախ անոր յատակագիծը կը յօրինենք, ապա կառուցման ծախսը կը հաշուենք մեծագոյն խնայողութեամբ. եթէ տեսնենք թէ մեր կարողութենէ վեր է, նոր յատակագիծ մը կը պատրաստենք. աս է չըջահայեցութիւնը»: Չկայ ո եւ է գործ մը, արուեստ մը կամ ճարտարութիւն մը, զոր մարդ առանց չըջահայեցութիւն ունենալու կարող ըլլայ ձեռք բերել կամ ի գլուխ հանել: Արդ, որչափ աւելի կարեւոր է ամբողջ տարիի մը մեծ կեանքը՝ Աստուծոյ պահանջածին պէս ապրելու համար, անոր ծրագիրը սկիզբէն՝ երկնաւոր Հօր հետ գործակցելով գծելը:

Ս. գրական տարիներ կան, որոնց Ամանորի առթիւ հեղ մըն ալ յիշատակումը, ներքնահայեաց եւ չըջահայեաց ոգիներուն զանազան դասեր կը թելադրեն: Ամբակում մարգարէն արքունիքեան տարիներուն վրայ խօսելով կ'ըսէ. «Ո՛վ Տէր, քու գործք տարիներուն մէջ նորոգէ, ո՛վ Տէր, տարիներուն մէջը գիտցուր»: Երեմիա մարգարէն ալ մահուան եւ այցելութեան տարիներ կը յիշէ: «Տէրոջը կողմէ Երեմիա մարգարէն՝ Անանիաին ըսաւ. «դուն աս տարի պիտի մեռնիս, վասնզի Տէրոջը դժ մ ապրտամարութիւն խօսեցար». եւ Անանիա ան տարիին եօթներորդ ամսուն մէջ մեռաւ: Եւ «Անաթոլթի մարգոցը վրայ՝ անոնց այցելութեան տարին չարիք պիտի բերեմ»:

Վարձատրութեան տարիներ կան, «քանզի Տէրոջը վրէժխնդրութեան օրը ու Սիօնին վէճին համար հատուցման տարին է». (Եսայ 51³). Եկեղեցապատկան հոգեւոր փրկութեան տարիներ ալ կը յիշուին Եսայիի միջոցով. «Իմ սիրտիս մէջը՝ իմ փրկածներուս տարի՝ հասած էր»: Ասոնցմէ զատ Եսայի մասնաւոր շնորհքի տարի մըն ալ յիշեց, երբ «Տէրոջը ընդունելի տարին» մասնաւորապէս շեշտեց: Սողոմոն իմաստուն ալ ուրիշ տեսակ տարիներու վրայ կը խօսի. «քու Ստեղծիչդ երիտասարդութեանդ օրերուն մէջ յիշէ, դեռ թշուառութեան օրերը չեկած ու ան տարիները չհասած»: Հին կտակարանի յոբելեան տարին՝ հաւանականաբար հազարամեայի երջանկութեան նախատիւն է: Նոր կտակարանի՝ «Տէր՝ աս տարի ալ ատկաթող տուր մինչեւ որ ատոր բոլորտիքը բրեմ ու թորիք դնեմ» ոսկեղէն համարին մէջ, ցոյց տրուած փորձի տարին՝ երկայնամիտ Աստուծոյ Աւետարանի փառայեղ դրութեան պատկանող համբերութեան տարիները մատնանիչ կ'ընէ: Արդ, 1905րդ տարուան սեմին վրայ, բանական էակներ վերոյիշեալ խորհրդաւոր տարիները իբրեւ հայելի գործածելով, պէտք է անոնցմէ գործնականապէս օգտուին:

Երբ նոր տարուան սեմին վրայ կենալով իրարու հետ ջերմագին շնորհաւորութիւններ կը փոխանակենք, մեզմէ ոմանք ամբողջ տարուան դէպքերուն յաջորդական չարքին կանխագիտութեանը կը տեսչան: Եթէ գիտուններէ ոմանք, հրաշալի հեռագիտակով մը, տարիին վախճանը՝ հիմակու ընէ տեսնելու յոյսը ունենային, անտարակոյտ զիրենք մեծապէս հպարտ պիտի զգային: Եթէ կանխագէտ ըլլալը բանական էակներու համար գործնականապէս օգտակար ըլլար, Աստուած այդ կարողութիւնով ալ մարդը պիտի օժտէր: Ո՛վ գիտէ, նոր տարուան միջոցին, քանի դառն սիրտեր Մատայի լեղի ջուրերուն պէս, կենաց ծառին միջոցով պիտի քաղցրանան: Ո՛վ գիտէ, մահուան հրեշտակին անգուլթ ձեռքերը մեր բարեկամներէն քանի՞ հոգիներու արտասուքի դառն գա-

ւաթներ պիտի մատուցանեն: Եթէ խանդա-
կաթ մայր մը, Նոր Տարիին սկիզբը կան-
խաւ զիտնայ թէ, իր առոյգ սրտահատորը
դեկտեմբերին մէջ պիտի վախճանի, անտա-
րակոյս ամբողջ տարին իրեն համար ան-
տանելի տխրութեամբ պիտի անցնի: Ի՞նչ
մեծ շնորհք է որ կեանքի խնդիրներու մէջ
սպագային դէպքերը մեզմէ ծածկուած են:
Մարդուս եւ սպագային միջեւ խորհրդաւոր
քօղ մը կախուած է. թող մնայ այդ չքնաղ
քօղը: Մարդուս համար շատ անգամ լաւա-
գոյն բանը՝ անգէտ ըլլալ ու սպասելն է:
Մարդուս գերագոյն պարտականութիւնները
ներկային մէջ իր սովորական գործերը երկ-
նային սկզբունքներով կառավարել ու իր
ամբողջ կեանքը Ամենաբարձրեալին համար
իր անոյշ բուրումներովը խունկի սեղան մը
պատրաստելն է:

Հաւատացեալները Նոր Տարուան սեմին
վրայ կայնած՝ հաւատքի աչերով տեսնել
պէտք են թէ, Աստուծոյ կանխատեսու-
թեամբ եւ նախասահմանութեամբ ձեւուած
Նոր պողոտայ մը կայ իրենց առջեւ ընթա-
նալու համար: Այդ խորհրդաւոր շաւիղին
մէջ հաւատարմութեամբ քալելը՝ բոլոր քը-
րիստոնեաներուն համար նուիրական պար-
տականութիւն մըն է: Աստուածային տնօ-
րէնութեամբ թոյլ տրուած չէ որ հաւատաց-
եալները այս վաղանցիկ փորձավայրէն միայ-
նակ անցնին, ինչպէս տաանցին ամայու-
թեան մէջէն: Մեծ Առաջնորդը այս ճամբուն
մէջ անոնց հետ անձամբ պիտի ընկերակցի
Թերազաւատութեան մթին ամպեր, շատ մը
քրիստոնեաներու ճամբաները պիտի շրջա-
պատեն: Սակայն պէտք է յիշել թէ հոգեւոր
աշխարհի մէջ մեր վայելած օրհնութիւննե-
րուն մեծագոյն մասը այն մթին ամպերէն
կուգայ: Մի վախնաք ամպերէն, անոնց ե-
տեւ «անձրեւի օտանձայներ» կան, որ բա-
րիքներ կը տեղան: Ամպերէն մի խոռվիք,
վեր նայեցէք, անոնց ետեւ ոսկեճաճանչ տա-
րեգակ մը կայ: Հաւատացեալները դէպի ոս-
կեղէն քաղաքը առաջնորդող ճամբան կըտ-
րող՝ դժուարութեան ամէն գետի վրայ,

Մեծ Հրամատարին հրաշագործ ձեռքովը կա-
մուրջ մը ձգուած է: Ամանորի առաջին եւ
խորհրդաւոր օրուան մէջ, քաղցր է յուսալ
թէ այս տարի Անտեոնանելի եկեղեցիին զը-
լուիը՝ Քրիստոս՝ իր տեսանելի եկեղեցիին
մէջ հաւաքապէս գերազանցօրէն պիտի փա-
ռաւորուի. բազմաթիւ անուանական քրիս-
տոնեաներ անհասապէս հիանալիօրէն՝ յաւի-
տենական լոյսին անդրադարձիչները պիտի
ըլլան. եւ տակաւին երկրաբնակ, սակայն
հաւատքով երկնաքաղաքացի շատ մը հրեշ-
տակատեսիլ արարածներ զովաբանութեան
թեւեր առնելով, Յաւիտենականութեան
փառաւոր կեդրոնը պիտի սաւառնին:

ՓԱՌՆԱԿ ԻՍՔԷՆՏԷՐՈՆԱՆ



ԸՆԹԱՑԻԿ ՆԻԻԹԵՐ

ՎԱՏՈՒԱՍ ԺԱՄԵՐ

Երնկերզպընտ՝ անգլեհհնդիկ կառավարու-
թեան կողմէ վերջերս Թիպէթ գացող նշա-
նաւոր արշաւախումբին նշանաւոր հերոսը՝
իր կարեւոր մէկ հրատարակութեանը մէջ,
կ'ողբայ ա'յն պարսպ տեղը սպառած ու-
ժերն ու անօգուտ տեղը վատնուած ժամա-
նակը, որոնք սահմանուած էին իր
յաճախած համալսարանին մէջ՝ լատիներէնի
ուսումին համար: Երանի՜ թէ կ'ըսէ՝ լատի-
ներէնին տեղ իրեն սորվեցնէին անա'նկ բան
մը, որմէ ինք կարենար օգտուիլ ետ-
քը, իր դպրոցական կեանքէն անդին: Մե'ղք
կ'ըսէ՝ ա'յն պահերուն, որոնք սահմանուած
էին հին լեզուի մը ուսումին համար:

Եթէ պէտք ըլլար, ես ալ կրնայի ձայ-
նակցիլ իրեն, ճի'շդ նայն լատիներէնին մա-
սին, որուն զոհեր եմ ես ալ Րոպէրդ Գոլէճի
մէջ՝ սանկ ու նանկ՝ երեք տարիներու ու-
սանողութեանս մէկ կարեւոր մասը, փո-
խարէնը ստանալով գրեթէ ոչինչ: Գրե'թէ
ոչինչ, վասնզի մեր ընթացաւարտութեանը,
մեզի տրուած տիպլօմներու լատիներէնն

իսկ անկարող էինք հասկնալ, առանց անգլերէն թարգմանութեան : Ու անկէ ասդին ալ մի՛շտ նոյնպէս, երբոր հանդիպիր եմ լատիններէն նախադասութեան մը՝ միայն անգլերէնով լաջողեր եմ քակել զայն : Որով իրաւունք սւնիմ ես ալ, շատերու հետ մեղքընալ ա՛յն ժամերը, զորս պարապ տեղը վատներ ենք լատիններէն նախադասութեան մը՝ լատիններէն ըլլալը ճանչնալու համար պարզապէս :

Գրաբարի զէմ մեր ըրած զանգատին կը նմանի Անգլիացիներուն դանգատը՝ լատիններէնի եւ յունարէնի դէմ : Բայց մի՛շտ զօրաւոր պաշտպաններ գտնուած են այդ երկու դասական լեզուներուն, որոնց վրայէն սակայն եթէ վերցուելու ըլլայ դասականութեան հմայքը՝ անտարակոյս շատոնց դուրս հանուած պիտի ըլլային անգլիական զպրոցներէ : Եւ այս մասին գաղափարներու զօրաւոր հակահոսանք մը ծայր տուած է արդէն, ինչպէս կը տեսնուի վերջերս Օքսֆորտի մէջ տրուած որոշումի մը առիթով : Խնդիր եղած էր թէ՛ յունարէնը պէ՛տք է աւանդել այդ աշխարհահռչակ ուսումնարանին մէջ, իբրև ստիպողական դաս : Ասանկ հարցում մը, մինչեւ հիմա՝ ո՛ր և է ուսումնական համարուած անձի մը ներքին չէր նկատուեր, բայց վերջերս տեղի ունեցած վիճարանութեան մը միջոցին, այդ համալսարանին մէջ իսկ յունարէնը քիչ մնաց կորսընցնէր իր զարաւոր աթոռը : փոքրիկ շա՛տ փոքրիկ մեծամասնութեամբ միայն յունարէնը պահուեցաւ իբրև ստիպողական դաս մը այդ պահպանողական համալսարանին մէջ :

Այս պարագան ինքնին ըմբռնումի խիստ կարեւոր փոփոխութիւն մը ցոյց կուտայ, ի մասին դասական լեզուներու : Ժամանակիս գործնական ոգիին շա՛տ չեն համապատասխաներ այդ դասականները. անոնց տեղ կը փոփաքին գնեղ արդի լեզուները. թաղել մեռածը, ի՛նչ որ բնական է :

Մեր վարժարաններուն մէջ, լատիններէն չաւանդուիր որ մենք ալ խօսինք անոր շը-

րայ : Բայց կարծեմ թէ՛ լատիններէնը զբարին տեղը դնելով՝ այդ նոյն գիտազուծիւնները կրնան օգտակար ըլլալ ձեզ զպրոցներուն համար : Գրաբարի շատ մը կուննեան ու խրթնարանութիւնները կը գողնան հայ աշակերտին ժամանակը, որ կրնայ տրուիլ անանկ բաներու, որոնց անհրաժեշտ պէտք պիտի ունենայ՝ դպրոցէն դուրս :

Տարակոյս չունիմ թէ՛ մեր վարժարաններէն ելող ընթացաւարտներ ալ իրենց կարգին շատ առիթներով աւաղած են որ զպրոցական իրենց թանկագին ժամերը տրուած են գրաբարի ուսումին : Շատ անգամ զգացած են թէ՛ հո՛ն վարժարանին մէջ իրենց աւանդուած կարգ մը դասերէն՝ մազի չափ օգուտ մը չեն քաղած իրենց տալաքայ կեանքին մէջ :

Պահպանողականութիւնն ալ չա՛փ մը ունենալու է. ահաւասիկ աւանդապահ Անգլիացիներն իսկ հարկ կը տեսնեն ժամանակին հետ քալել :

ՀԱՅԿ ԱԳՈՅՑ

Ամերիկա գտնուած է Գոլումպոսէ 1492
Հոկտ. 12ին, եւ Հիւսիստրակներէ՝ 985ին :

Աշխարհ օրը 4 միլիոն գրչածայր կը սպառէ :

* Ամէնէն արագաքայլ ուղտը 100 մղոն կրնայ ճամբորդել :

* Աշխարհի ամենարարձր շէնքն է Էյֆէլի աշտարակը, Բարիզի մէջ, ու 990 սոք բարձր է :

* Դաշնակը Իտալիոյ մէջ գտնուած է 1710ին :

* Առաջին անգամ Յոյն եկեղեցիներու մէջ երգեհոններ դորձածուեցան Քրիստոսէ վերջ 65ին. իսկ Անգլիոյ մէջ՝ 951ին :

* Օճառը շինուած է առաջին անգամ Անգլիոյ մէջ 16րդ դարուն :

* Աշխարհի վրայ 2,750 լեզուներ և գաւառաբարբառներ կան :

ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹԵԱՆ ԿԵՆՍԱԿԱՆ ԶՕՐՈՒԹԻՒՆԸ

Բ.

Կ'արժէ նաեւ հարցնել թէ ի՞նչ զօրութեամբ է որ այս կրօնը ոչ թէ միայն պահուած, պահպանուած է այսքան երկար դարերու, այսքան ընկերական մտաւորական և բարոյական փոփոխիչ պայմաններու մէջ, ու այսքան խաւար դարերէ անցած է առանց կորնչելու և մեռնելու, այլ թէ ի՞նչ զօրութեամբ է որ ան կրցած է կրկին ու կրկին վերածնիլ, վերակենդանանալ և նորոգ կենսական ոյժեր ի վեր բերել: Թէ որ նիւթական զօրութիւն ըլլար անոր ունեցածը՝ ան պիտի հիննար, պիտի մաշէր դարերու մէջէ իր ունեցած գնացքով. ան պիտի մեռնէր վերջապէս այն տարապայման փոփոխութեանց մէջ զորս կրեցին իր շուրջ՝ ամէն ազգեր ու շատ մը կրօնքներ: Ամենէն ուշագրաւ եղելութիւններէն մէկն է այս՝ ազգաց պատմութեան մէջ, որ երբ հին հեթանոսութիւնը մեռաւ, մեռաւ ալ չվերակենդանալու համար, և այդ կրօնը ամէն արտաքին նպաստաւոր ոյժերը ու նեցուկները իր կողմը ունէր: Յուլիանոս՝ ի զուր զործածեց իր ձեռքին ներքեւ զտնուած բոլոր Փիղիքական ոյժերը, որպէս զի վերստին յարուցանէ հին ինկած հեթանոսութիւնը, վերստին կանգնէ անոր աստուածները, անոր տաճարները, անոր պաշտամունքը զոր ժողովուրդը ինքնարեքար լքեր էր: Խոստումներով, բարձրացումներով, վարձատրութեամբ կամ պտտիժով՝ ան իր բոլոր զօրութիւնը զործածեց, որպէս զի կրկին լեցուին հին հեթանոսական տաճարները՝ որոնք թափուր մնացած էին: Ան իր բոլոր նիւթական ու արտաքին կատաղութիւնը զործածեց, վերանորոգելու եւ կանգնելու այն կրօնը՝ որուն հետեւեր էին դարերով աշխարհիս ամենէն զարգացեալ, հարուստ քաղաքակրթիչ եւ զօրեղ ազգերը, և որ նուիրագործուած էր ամէն կարգի ամենաբարձր հանճարներու արտադրութիւններով:

Ճարտարապետութիւնը եկած էր իր մարմարներով, անզուգական կրանիթ սիւներով ու արուեստի աճենաչքեղ զործքերով զարդարելու անոր տաճարները: Գեղարուեստները եկած էին նուիրել անոր իրենց ամենէն հիանալի արտադրութիւնները, իրենց զուլս զործոց արձաններով եւ քանդակագործութեամբ: Հոմերոսի եւ Վիրգիլիոսի նման անզուգական բանաստեղծներ՝ զրօշմեցին զայն իրենց անմահ տողերուն մէջ, եւ Կիկերոնի ու Դեմոթենէսի նման մեծ ատենաբաններ՝ շողացուցին զայն իրենց հրավառ ճարտարախօսութեամբ: Այսպիսի պաշտամով կրօն մըն էր այն զոր ուրացողն Յուլիանոս ուղեց կրկին կանգնելու վերանորոգել: Ու երբ նիւթական բոլոր ոյժերը սպառեց, դիմեց նաեւ մտաւոր ու գրիչի զօրութեան: Ինք իսկ՝ որուն մտաւոր կարողութիւնները արհամարելի չէին բնաւ, ձեռնարկեց տրամաբանութեան եւ ձեռնարկեց մարդկային մտքի բոլոր ճարտարութեամբ քանդել նորահաստատ Քրիստոնէական կրօնը, եւ մեծացնել ինկած հին հեթանոսութիւնը ու անոր պաշտամունքը. բայց ասոնք ամէնքը հաւասարապէս անյաջող ու ապարդիւն մնացին: Հին հեթանոսութիւնը մեռաւ ու ջնջուեցաւ վերջապէս, ու անդառնալի կերպով, մեռաւ ոչ եւս յարութիւն առնելու: Անոր մէջ կենսական ոյժ մը չգտնուեցաւ երբեք վերստին վեր հանելու զայն, ու կրկին կեանք տալու անոր անչնչացեալ դիակին: Այն ընդարձակ սահմանին մէջ՝ ուր կ'ապրէր եւ կը մեծարուէր ան, Եփրատէն մինչեւ Բրիտանիոյ վերջին եզրերը, Նեղոսէն մինչեւ Գերմանիոյ անտառները, ան բոլորովին անհետացաւ: Դասական հեթանոսութիւնը Յուլիանոսը ու Հոմմէականը, Ասորականը, Եգիպտականը եւ Հիւսիսային Ափրիկեանը, Տրուիտականը և վերջ ի վերջոյ Տեւտոնականն ալ՝ ամէնքը ինկան, այլեւս չելլելու համար: Տակա-

ւին Եւրոպայի ամենէն բարձր համալսարաններուն մէջ հիացումով կը կարդացուին և կ'ուսուցանուին չումբրոս, Վիրգիլիոս, Կիկերոն, Տեմուսթիսէս եւ այլն, եւ գրականութեան ու բանաստեղծութեան իբր բարձրագոյն օրինակներ կը յարգուին. բայց անոնց տողերուն մէջ փառաբանուած աստուածները բոլորովին աւլուած տարուած են աշխարհէն. ոչ մէկ բազին կրնաք գտնել տեղ մը կանգնուած այդ հին, մեծարուած աստուածներուն համար, պաշտելի Վէնիւսին, գեղեցկութեան աստուածուհիին, Եփեսացոց մեծ Արտեմիսին կամ որ եւ է ամբողջ ժողովուրդներէ պաշտուած եւ սիրուած աստուածի մը կամ աստուածուհիի մը համար՝ երբեք աշխարհիս որ եւ է անկիւնին մէջ այսօր կանգնուած բազին մը կամ տաճար մը չէք կրնար գտնել: Մահը եւ ջնջումը կատարելապէս և ամբողջական եղած են, այնքան ամբողջական որ բաղդատելով անոր հետ այն նախկին ընդհանրական եւ բոլորանուէր պաշտումը զոր անոնք կ'ընդունէին ամենէն հզօր ժողովուրդներէն, մարդ կ'ապշի կը մնայ: Ամենէն զարմանալի եւ հրահանգիչ տեսարաններէն մէկն է այս զոր պատմութիւնը կը ներկայացնէ մեզ: Արդ՝ եթէ հին հեթանոսական կրօնի մէջ ներքին հոգեկան զօրութիւն մը գտնուէր, ան չէր կրնար այսպէս անհետանալ երկրի երեսէն: Անոր նիւթական ոյժը և արտաքին բոլոր փառքը ու հրապոյրը կարող չեղան փրկել զայն: Եւ քրիստոնէութեան փրկարար զօրութիւնը կը կայանայ այն ներքին կեանքին մէջ, զոր ան կուտայ իր հետեւողներուն. թէ որ անոնք կորսնցնեն այդ զօրութիւնը, փոյթ չէ ինչ ուղղափառ վարդապետութիւններ, ինչ աքանչելի, կարգաւորեալ դաւարանութիւն կամ աստուածաբանութիւն, ինչ փառաւոր ու զօրեղ կազմակերպութիւն, ինչ հոյակապ ծէսեր և արարողութիւն ունենան՝ չեն կրնար ապրիլ մահուան դատապարտելի է ինչ որ հոգեկան կեանք չունի իր մէջ: Եոյն իսկ բարձրագոյն բարոյականը՝ ինքնին քրիստոնէութեան

բուն զօրութիւնը չէ. թէպէտ աներկրայելի է թէ այնպիսի բարոյական մը միշտ կը միանայ անոր, եւ անբաժանելի է, բայց սոսկ բարոյական կեանքը չունի այն կենդանի զօրութիւնը՝ որուն պէտք ունի աշխարհս: Գրիստոսի բարոյական ուսուցումը շատ գերազանց բան մըն էր, ասոր ամէն մարդ կը հաւատայ. բայց ուրիշ տեղեր ալ բարձր կարգի բարոյական ուսուցումներ գտնուած են ու կը գտնուին: Հեթանոս Մարկոս Աւրելիոսի բարոյականի ուսուցումները շատ նկատմամբ կը նմանին Գրիստոսի սորվեցուցած բարոյականին, բայց կայ անոնց մէջ գլխաւոր տարբերութիւն մը եւ ան ալ սա է որ՝ մէկը մեռած է եւ միւսը կ'ապրի, կեանք ունի: Աւրելիոսի խօսքերուն մէջ չկայ բարոյական շարժառիթ եղող ոյժ մը, մէկուն սիրտը երբեք դղրդած չէ անոնցմով եւ զանոնք կարդալով կամ լսելով իր ճամբաներէն դարձած չէ, թէպէտ բարի մարդիկ կրնան անոնցմով կատարելագործուած ըլլալ: Ընդհակառակը Գրիստոսի բարոյականը աղքեցիկ ու հզօր է՝ ան հիմնուած է Աստուծոյ սիրոյն վրայ որ ամենէն գերազանց ոյժն է, Հին հեթանոսները ունէին Արամազդ աստուածին ամենաչեղ մէկ արձանը՝ Փիտիաս ամենաճարտար քանդակագործէն շինուած, համակ ոսկիէ եւ փղոսկրէ կազմուած, որ աշխարհիս եօթը հրաշալիքներէն մէկը սեպուած էր իր բոլոր անպատմելի գեղեցկութեամբը, սակայն, վարագոյրի մը տակ սքօղուած կը մնար թողոր տարին, ու միայն մէկ անգամ մեծ տօնին ատեն, քուրմերը, ամենափառաւոր արարողութեամբ ու վսեմ երաժշտութեամբ, վարագոյրը վար կ'առնէին անոր վրայէն՝ եւ երբ ան իր բոլոր փառքով ու գեղով՝ կը շողշողար ու կը ճառագայթէր ակնապիշ իրեն նայող բազմութեան վրայ՝ անոր գեղեցկութիւնը ու վսեմութիւնը տեսնողներէն շատեր կը՝ դիւթուէին կը հմայուէին, կուլային, ուրախութեան ձայներ կ'արձակէին, եւ երբեմն կը նուաղէին իսկ Եթէ արդ նիւթական գեղեցկութիւնը ու ժողովը որ կը բղխէր հըս-

կայական արձանէ մը՝ այսքան սարսուռ կուտար մարդոց բնութեան, զարմանալի՞ բան է որ մարդկութիւնը վերացած ու վերակենդանացած ըլլայ այն փառքէն ու գեղեցկութենէն, որ երեւան եկաւ ճաճանչաւէտ լոյսով մը՝ երբ Քրիստոս ինք վարագոյրը վառ առաւ ու իր կեանքով ու զարմանալի մահով երեւան բերաւ այն անհուն ու անհասկնալի սէրը որ կը կենայ մեր Յաւիտենական Աստուծոյն սրտին մէջ: Ասոր մէջ է Քրիստոնէական կրօնի կենսական զօրութիւնը. անիկա սիրոյ կեանքն է որ չմեռնիր բնաւ եւ ո՛ր ատեն որ գըտնուած որ եւ է մարդ մը՝ որ Աստուծոյ անպատմելի սիրոյն վրայ հիմնուած այս Աւետարանին արծաթ փողը հնչեցուցած է, մարդիկ միշտ այդ նորանշան ձայնէն ար-

թնցած ու վերակենդանացած են ու պիտի վերակենդանան: Ո՛չ, ո՛չ, Քրիստոսի կենդանի կրօնը մի կապէք ոռկիի, արծաթի, քարի, փայտի կամ որ եւ է արտաքին իրի հետ, այլ կապեցէք Աստուծոյ այն սիրոյն՝ զոր Քրիստոս յայտնեց, եւ այն ատեն ալ մի վախնաք որ ան երբեք կ'իյնայ կամ կը տկարանայ: Մեր երկրագունտին պէս որ եւ է նիւթական պատուանդանի վրայ չէ որ կեցած է, այլ անհուն անջրպետին մէջ ուր դարերով կը սաւառնի, հաստատ ու անվրկանդ, թող մեր կրօնքն ալ կախուի ու սաւառնի Աստուծոյ անճառ ու յաւիտենական սիրոյն անհունութեան վրայ: Այն ատեն ալ մի վախնաք անկէ: (*)

ՅԱԿՈԲՈՍ Հ. ՃԷՃԻՉԵԱՆ

(*) Մտաւոր թիւերու մէջ պիտի խօսինք քանի մը յօդուածով՝ «Քրիստոնէական կրօնը պատմութեան լոյսի տեսակէտէն» նիւթին վրայ:

Ս. ԳԻՐՔԸ ՀԱՆԱՏՔ ՊԱՅԱՆՁՈՂ ԻՐՈՂՈՒԹԻՒՆ ՄԸ

«Տերոզը խօսք փորձուած է».

Բ.

Գանք միւս խնդիրին թէ, Ս. Գիրքի թարգմանութիւնը կրնա՞նք Աստուծոյ գիրքը կոչել:

Կը պատասխանեմ. այո՛ կրնանք. Քրիստոս կը լուծէ այս ամբողջ խնդիրը. Ան կը սորվեցնէ թէ գիրքին թարգմանութիւնը Ս. գիրքն է, եթէ Ան այսօր հոս ըլլար ու Ս. Գիրքին կոչում ընէր, արդի մեր ունեցած թարգմանութիւնը պիտի գործածէր: Ինչպէ՞ս գիտեմ ասիկա. ասկէ գիտեմ որ Ան երկրի վրայ եղած ատենը այդպիսի բան մը ըրաւ. երբ Ս. Գիրքին գիմում կամ կոչում կ'ընէր, չէր ընել նախնական երրայական Ս. Գիրքին, այլ՝ Ծօթանասնից թարգմանութեանը, որ ժողովուրդին ծանօթ էր: Այո՛, ստոյգ է որ մենք միայն թարգմանութիւն մը ունինք, բայց Յիսուսի արտօնութիւնովը

այդ թարգմանութեան մէջ Աստուծոյ վրաստանելի գիրքը ունինք: Ս. Գիրքի ընկերութիւններ Աստուծոյ Գիրքը թարգմանելով ազգերու կը շրկեն, որովհետեւ իւրաքանչիւր թարգմանութեան միջոցով Աստուած կը խօսի: Ան կը խօսի փիլիսոփայական յունարէնով, սահուն ու ողորկ իտալերէնով, գերմաներէնով, կրքոտ Փերանսերէնով եւ քաջ Անկլօ-Սաքսոներէնով: Արդարեւ քու զրկած գիրքիդ մէջն է մարդկային աարբը, բայց հոն է նաեւ Աստուածայինը. գիրքը մարդու գրութիւն ու մարդու թարգմանութիւն է, բայց խորհուրդը Աստուածային է: Ստոյգ է որ գիրքին մէջ մարդը կը գանուի, բայց ան հոն է իրբեւ Աստուծոյ ծառայող մը: Չեմ կարծեր որ մարգարէն կամ առաքեալը Աստուծոյն իրեն

յայտնուածը ուրիշներու հազորդելու համար պարզ գործիք մը կամ հեռաձայն մըն էր. անիկա իր անձնատուութիւնը կամ եսը չկորսնցուց: Գիրքին գրութեանը միջոցին Աստուծոյ ձեռքը իր ծառաներուն վրայ էր, որուն հպումին ազդեցութեանը տակ անոնք շարժեցան, բայց այդ շարժումները անոնց բուն իսկ էութեան և անձնատուութեան օրէնքին համեմատ էին: Լոյսը տուաւ այն գոյնը որուն մէջէն անցաւ, եւ Աստուած կամեցաւ որ այդպէս ըլլար, քանի որ ընտրեց միջոցներ, ինչպէս որ երաժիշտը տարբեր գործիքներ կ'ընտրէ, անոնց միջոցով, իր եղանակը ածելու համար, ինչպէս երբեմն զօրաւոր Քորնէլի մը յստակ խաղերովը կը զրկէ զայն արձագանգելու համար բլուրներու մէջ, երբեմն սրիւնդի մը քաղցր ձայնովը կը թողու թրթռալ գիշերուան լռութեանը մէջ, ու երբեմն ալ փառաւոր օսկանի մը ստեղնաշարերովը կը պատճառէ անոր թաւալիլ վեհաշուք եկեղեցիներու կամարներուն տակ, նոյնպէս ալ Աստուած իր միեւնոյն ճշմարտութիւնը տիեզերք կը զրկէ, երբեմն՝ բազմակողմանի Դաւիթի բռնութեան մէջէն իբր թէ օսկանի, երբեմն՝ սիրելի Յովհաննէսի բնութեան մէջէն, իբր թէ օրինդի, եւ երբեմն ալ՝ արամաբան Պօզոսի բնութեան մէջէն իբր թէ Քորնէլի:

Անաւատիկ գիրքը որուն համար կ'ըսեմ թէ Աստուծոյ գիրքն է. բայց իմ հաւատքիս իբր սիւն ի՞նչ փաստեր սենիմ, անոնցմէ երեք հատ ձեզ պիտի ներկայացնեմ, վստահ ըլլալով որ ուրիշներու վրայ ալ դուք պիտի խորհիք:

Ա. Իմ առաջին փաստս գիրքին տնօրէնականութիւնն է:

Ուսլթըք Սքոթ իր մտնուած անկողնին մէջ «միայն մէկ գիրք կայ» ըսաւ, ու խորհրդեց իր բարեկամներէն որ անկէ կարգան իրեն: Ս. Գիրքէն եղած ընթերցումը մահուան համար պատրաստութիւն մըն էր Ուսլթըքի, որ իր բոլոր օրերը գիրքեր գրելով ու կորագուով անցուցած էր: Գար-

լայլ «Ս. Գիրքի նման ուրիշ գիրք մը եղած չէ ու պիտի չըլլայ ալ» ըսաւ: Ու երբ երիտասարդ մը հարցուց իրեն ըսելով, «Առակաց գիրքին մէջ նշանաւոր բան մը չկայ», Գարլայլի պատասխանը եղաւ. «քանի մը առակներ շարադրէ, այն ատեն տարբեր պիտի խորհիս այդ գիրքին վրայ»: Ի՞նչ է պատճառը որ Ս. Գիրքը անցեալին բոլոր գիրքերէն աւելի ապրած է, ու տասնեւիններորդ դարու սր եւ է մէկ գիրքէն աւելի գործածական դարձած. պատճառը ուրիշ բան չէ, եթէ ոչ «յարմարագոյնը կ'ապրի» ի օրէնքը որ կը տիրէ գիրքերու սահմանին մէջ: Ս. Գիրքը իր մեծութեամբ, թէեւ մեր ունեցած յունական եւ հռոմէական գրականութեան Յ հարիւրորդ մասը հազիւ կը կազմէ, բայց անոնցմէ աւելի իր վրայ քաշած ու կեդրոնացուցած է մարդկային խորհուրդը եւ անոնցմէ աւելի գիրքերարուագրած: Անիկանցեալի հնութեան միակ գիրքը ըլլալուն համար, որ դարը կը գերազանցէ, կը կանգնի իբրեւ անզուգական գիրք մը. ինձ կը թուի թէ անիկա դարերու Ապտուծոյն կողմէ եկած է: Զարմանալի է որ դեռ որքան շատ հարըստութեան անձանօթ հանքեր կան Ս. Գիրքին մէջ, եւ ինչպէ՞ս մարդիկ կ'աշխատին փորել զանոնք: Ինչպէս որ բնութեան մէջ շատ մը բաներ երկար դարերու շրջանին մէջ ծածկուած կը մնան, մինչեւ որ իրենց ստիճանուած ժամանակին նեւտակ մը եւ կամ էտիսըն մը զանօնք իրենց մենաշնորհ ընեն, նոյնպէս է նաեւ Ս. Գիրքին մէջ. եւ ուստի ինչպէս բնութիւնը՝ գաբուն գիտութեանէն, նոյնպէս Ս. Գիրքը դարուն խորհուրդէն ու նպատակէն շատ աւելի բարձր ու յառաջացած վիճակի մէջ կը գտնուի ներկայ դարուն մէջ. կրօնական խորհուրդներու յառաջդիմութիւնը այն սիրոյ զարգացումէն յայտնի կ'ըլլայ որ, ցաւալի է ըսել թէ երկար դարերու մէջ կը պահպանուի Բայց երբ Ս. Գիրքը կը բանօնք, հոն կը գրանցենք այն սէրը եւ ազատատիտութիւնը իր այնքան օրոշ գոյներովը, որ մեզի գրէթէ

անհաւատալի կը թուի դարերու անցնիլ երթալը առանց զանոնք նշմարած ըլլալու : Այո՛, հիւանդանոցներ եւ անկեղանոցներ մեծաւ մասամբ ներկային պտուղներն են, բայց Ս. Գիրքին մէջն էին սկիզբէն ի վեր այն սկզբունքները որոնք կանգնած են զանոնք : Խիստ գեղեցկօրէն ըստած է թէ Ս. Գիրքին պարունակած ճշմարտութեանն շատեր կարեկցութեան մեղանով գրուած են, անտեսանելի աչքերու, մինչեւ որ ժամանակը գայ երբ՝ աշխարհ ճշմարտութեան նոր ժառանգութիւն մը ընդունելու պատրաստ գտնուի :

Բայց այս փաստը, Ս. Գիրքի անզուգականութիւնը, զայն քննադատողներուն համար յառաջ կը բերեմ : Ներկան քննադատական դար մը կը կոչենք, ու կը խորհինք թէ մենք անոր լրացուցիչը կը կազմենք, բայց պէտք է գիտնալ թէ լրացուցիչը չէ բարձրագոյնը : Մարդուն քննադատական կարողութիւնը կարեւոր գործ մը կը կատարէ, ու պէտք չէ որ արհամարհուի, բայց պէտք է նկատել թէ ան մարդուն փոքր մէկ մասը միայն կը կազմէ : Մեծ քննադատ մը կրնայ մեծ մարդ մը չըլլալ, եւ քննադատութեան դար մը կրնայ ստորին դար մը ըլլալ : Որովհետեւ շինելը աւելի ազնիւ ու լաւ գործ մըն է քան քանդելը : Ուստի քննադատական կարողութեանն աւելի ազնիւ է կազմականը, եւ իր արդիւնքովը անչափօրէն աւելի արժէքաւոր :

Դիւրին գործ է քակելը, բայց ճարտարութիւն կը պահանջուի շինելու համար : յիմար տղայ մը կրնայ ծաղիկ մը փրցնելով զայն փշրել, բայց Աստուած մը պէտք է զայն կազմելու եւ գունաւորելու համար : Ս. Գիրքը քանդելու աշխատող քննադատին սակէտը չնշտել կ'ուզեմ, թէ աւելի յաւ կ'ընէ եթէ Ս. Գիրքը իր կեցած անզուգական վրսեմութեան ու զօրութեանը մէջը թողու, մինչեւ որ կարող ըլլայ ինք շինել անոր հաւասար գիրք մը, որ ըլլայ իր լաւագոյնը, ծառայէ մարդկային սեփին, ինչպէս կը ծտուայէ ան, եւ ընէ մարդկութեան, ինչ որ ան

կ'ընէ : Ան որ կը ջանայ շինելու գիրք մը որ հաւասարի Ս. Գիրքին, պիտի տեսնէ թէ անոր մէջ որչափ կայ Աստուածային տարրէն, եւ ինչպէ՛ս կը գերազանցէ ան մարդկայինը : Եթէ մարդիկ իրենց միտքի բարձրութիւնովը կարենան կազմել անոր հաւասար մը, այն ատեն պիտի ըսեմ. «Ս. Գիրքը մարդկային գիրք մըն է» : Բայց տեսնելով որ մարդիկ իրենց միտքի մեծութիւնով չեն կարող անոր հաւասար մը կազմել, կը ստիպուիմ ըսել. «Ան Աստուածային գիրք մըն է» : Իր անզուգականութիւնը Աստուածային ըլլալուն ապացոյցն է : Ո՛վ քննադատ, մինչեւ որ կարող չըլլաս Ս. Գիրքը գերազանցելու, ինչո՞ւ համար զայն պիտի թողում. եթէ Ս. Գիրքը ձեռքէս առնես, ի՞նչ կրնամ կարգաւ ընտանեկան սուրբ սեղանին յուրջը. այս բեմին համար քարոզի համարներ ու կրնայի գտնել, եւ ո՞ւր կրնայի գտնել ճշմարտութիւն, անով կապելու համար այս ներկաներուն խիղճերը, եւ անոնց մէջ բաւականաչափ բարոյական ջիղեր ստեղծելու համար, որպէս զի երբ կը մտնեն աշխարհ, կարող ըլլան կեանքի փորձութիւններուն յաղթելու եւ անոր դժուարին պարտականութիւնները տանելու : Եթէ ինձմէ կ'ըզես յայտնութեան վերջին գլխուն այն յուսադրիչ տեսիլը, ի՞նչ կը մնայ ինձի ընել երբ իմ սիրականիս նորաշէն գերեզմանին առջեւ կը կանգնիմ : Կամ ի՞նչ պիտի ընէի բուն իսկ իմ մահուան ժամուս, եթէ իմ ձեռքէս առնես ՉՅրդ Սաղմոսը, եւ Ա. Կոր. ԺԳ. րդ գլուխը, իր գերեզմանի վրայ յաղթութեան երգովը : Սիրելի եղբայրներս, այս անզուգականօրէն վսեմ գիրքը պի՛նդ պիտի բռնեմ, մինչեւ որ լաւագոյն մը երեւան գայ. պիտի հաւատամ անոր Աստուածային ըլլալուն, մինչեւ որ մարդ մը, կամ մարդոցմէ դասակարգ մը, տնոր հաւասարող գիրք մը գրէ ու այսպէսով հաստատէ թէ ան մարդկային գործ մըն է :

ՏՕԲԹ. ԴԱԻԻԹ ԳՐԵԿ
 Թարգմ. Ս. Պ. ՄԱՆՈՒԿԵԱՆ
 (Մնացեալը յաջորդով)

S U R T U O U S C

C'est beau,
mais c'est triste

Կ'անցնին, կ'անցնին տարիները, մեր երեւակայութեան չափ արագ, մեր ձգտումներուն չափ սլացիկ :

Կեանքի փիլիսոփայութիւնն է որ կուգայ պատկերել մեզի, մարդկային կեանքին պատրանքներու իրար յաջորդող խաւերը, որոնց առջեւ, խարուսիկ ու անզրտակից նայուածքով, մարդ կ'ուզէ չափել անոր շրջագիծը, միշտ հոն պարփակելով իր բոլոր միտքն ու խանդը, երազանքի թռիչներով պարուրուած :

Շարունակական թաւալումը աշխարհագունտին, որուն առանցքին վրայ դառնալու նախասահմանուած է մարդկութեան ամբողջութիւնը, անգամ մըն ալ կը լրացնէ մէկը իր տարիներու երկար շրջագիծին, որուն կռուանին վրայ, թիւ մըն ալ կուգայ աւելցնել մարդ՝ աշխարհիկ տաճարներուն մէջ, անվրիպելի լուսանցք մը ձգելով այդ թուանշաններուն մօտ, անսահման ու անհաշիւ, իր միջոց դեռ յաջորդելիք թիւերուն, անեզր, անթիւ ու անհամար :

Ինչ փոխուեցաւ մարդկային կեանքէն. ոչինչ, ինչ որ երէկուանն էր, այսօր չարունակութիւնն է անոր, վաղուանին սկիզբը, Բայց, ինչքան ալ խորունկ ըլլան մարդկային վիշտերը, թէ հատնելու վրայ են մարդկային կեանքին հանգրուանները, մարդ միշտ բարձր հակումներ ունեցած է սակայն :

Մանուկին անգիտակից լսատանքը՝ նոր կեանք, նոր ոյժ ազդած է անգիտակցաբար մարդկային հոգիին, ու միշտ նորին հակամէտ իր մարդկային ունակութիւններովը, ալ աւելի խոշոր համեմատութիւններ տրուած է ան բոլոր այն գեղեցիկ բաներուն, որոնց մէջ կ'երթւէ կէտ, իրր զգացող մարդ, իրր գործնելու եւ ապրելու կոչումին առկանկամ անհատ, որէ օր քաղցրացած գրտնելով իր սրտին բոլոր թռիչները, մէկէն

միւսը ալ աւելի գորեղ, ալ աւելի անկնճիռ :

Կեանքին ներդաշնակութիւնն ալ իր կարգին կարծես երկնեւրանգուած է աս միջոցին : Եթէ տարիներու չափուած թաւալման եւ ընութեան ոգեւորութեանը մէջ, եզանակներու վառ շարքին մէջ դիւթիչ յաջորդականութիւն մը կայ, կեանքն ալ հոգեկան շատ մը քաղցրութիւններու ծնունդ կուտայ, որոնք կենսական սնունդը կ'ըլլան անոր տեւողութեանը, նրբահիւսելով մարդկային կեանքին զգացումի երանգները, նոր ու թարմ հեշտութիւններու հմայքովը բուրումնաւէտելով զանոնք :

Ինութեան յարափոփոխ զարթնումին չափ հիանալի, մարդուն կեանքի վերափրթ թուամն ալ անանկ բանաստեղծական բարձրութիւններ ունի իր մէջ, որ պզտիկ մէկ վերլուծում մը, արդէն իսկ մէկ անգամէն պիտի հիացնէ եւ պիտի սքանչացնէ մարդկային միտքը՝ իր խորհրդաւորութեանը մէջ զակարթելով անոր միտքն ու ամբողջ բանականութիւնը :

Նոր Տարին սրուն կը թեւակոխէ մարդկութիւնը, մարդու համար ծայր կուտայ կեանքի նոր յոյսերու, նոր ակնկալութիւններու, իրր ռսկեզօծ հեռանկար մը՝ մարդկային կեանքի փուլերուն մէջ, որոնց միջեանկան յաջորդութեան կրաւորական ազդեցութեանը տակ կ'ապրին ամէն մարդիկ ու պիտի ապրին կեանքի փոփոխութեանց այդ զանալանութեանը չափ ալ ձեւափոխելով մարդու կենցաղը, միշտ նոր յայտնութիւններու առջեւ ասրուբերելով զայն :

Նոր Տարին իր բոլոր շքեղութեանը, իր փայլին ու բերկրափայտ անակնկալներուն մէջ, կուգայ անգամ մըն ալ ողջունել մարդոց կեանքը, ցանցնելով անոնց իւրաքանչիւրին վրայ, տարբեր ոգեւորութիւն, տարբեր գիտակցութիւն :

Նոր Տարին, օրուան իսկ հայելիացումն է արդէն, պատկերացումովը մարդոց եւ հանճարներու մտաւորական ու բարոյական յառաջացումին, անոնց՝ որոնք ամէն ազգի, ամէն լեզուի ու ամէն կրօնի մէջ՝ անմահա-

ցընելու կողումը ունեցած են իրենց ցեղային նկարագիրը :

Եւ մաղթանքներու երկօր հիւսկէններ, սրոնց ծուէններ կը տարտղնոին այսօր, միշտ իրենց բարեյական ազդեցութիւնը ունեցած են մարդոց վրայ, պատրաստելով զանոնք նոր ու գեղերփնուած Տարեմտտները միշտ նոյն ոգեւորութեամբ զիմաւորելու :

ՌՕՄԱՆ Տ. ԽՈՍՐՈՎ

ԼԵՁՈՒԱԿԱՆ ՀԱՐՑ ՍԸ

«Ուշադրութիւն ըրած էք բողոքականները անգլ. լեզուին հետեւելով բաղաձայն գիրերու առջեւ «ը» գիրը կը կրճատեն, ինչպէս՝ կ'գրեմ, կ'յուզուի, կեն» յ'ըսէ յօղուածագիր մը: Մենք չկրցանք յիշել թէ անգլ. լեզուին որ օրէնքին կ'ակնարկէր յօղուածագիրը. շնորհակալ պիտի ըլլայինք, եթէ հաճէր իր ակնարկած օրէնքը մէջ բերել. բայց յօղուածագիրը ուրկէ՞ կը հանէ թէ բողոքականները «կը»ին «ը»ը կը ջնջեն: Ասանկ յայտարարութիւն մը ընելու, ասանկ եզրակացութեան մը յանդելու համար հարկ եղած քննութիւնը կատարած է, եւ իր ուսումնասիրութեան արդիւնքը ա՞յն եղած է թէ բողոքականները, իբր ամբողջութիւնը, այդպէս կ'ընեն. տեսած է թէ անոնց թերթերուն մէջ այդ օրէնքը որդեգրուած է, եւ անոնց հայերէնի ուսուցիչները այդպէս կը սորվեցնեն: Յօդուածագիրը ձրի ննթագրութիւն մը կ'ընէ. բողոքական գրիչի տէր անձինք այդպէս չեն զրեր, ոչ ալ անոնց թերթերը այդ կերպը որդեգրած են: Եթէ հոս ու հոն ումանք այդ կերպով կը գրեն, ատկէ օրէնք մը չենք կրնար հետեւցնել. թերեւս լուսաւորչական բարեկամներէ բաղդատաբար աւելի շատեր այդպէս կ'ընեն, ես կը ճանչնամ ուսեալ բարձր եկեղեցականներ, որոնք այդ հալածական «ը»ը կը ջնջեն յիշալ մասնիկին մէջէն, եւ կրօնաթերթ «Մասիս»ն

ալ, որ ութը ինը տարիներ առաջ կը հրատարակուէր Արմաշեաններու խմբագրութեամբ՝ «կը»ին «ը»ը ջնջելու օրէնքը ընդունած էր :


Խնդիրը այն չէ թէ որն է ճիշտը: Ումանք երկու կերպն ալ ճիշտ կը նկատեն, թէ եւ ըստ մեզ ուղիղ չէ: Քննելով Ուրուգուայի կ'ընդունի, չուրոզը չընդունիր: Իրողութիւնը սակայն այդ յօղուածագրին ներկայացուցածին պէս չէ: Իրողութիւնը սա է թէ հայ համայնքին երեք հատուածներուն մէջ ալ կան այդ ըր զեղջողներ, եւ սակայն երեք հատուածին ալ փոքրամասնութիւնն է այդպէս ընողը :

Բայց յօղուածագիրը արդեօք ի՞նչ շարժառիթով այդ բանը կը վերագրէ բողոքականներուն. արդեօք այնպէ՞ս կ'ուզէ ներկայացնել թէ անոնք իրենց սովորութեան, կենցաղին եւ նոյն իսկ լեզուական խնդիրներուն մէջ Անգլիացոց կամ Ամերիկացոց կը հետեւին: Եթէ այդ է ուղուածը, թէ եւ յիշուած օրինակը դժբաղդաբար ձախորդ օրինակ մըն է անօրինակ ապացուցանելու համար, եւ սակայն անոնք չեն վարանիր ըսելու թէ, կը ջանան հետեւիլ այն ամէն լաւ բաներուն եւ սովորութեանց, ուր որ ալ տեսնուին, ըլլան Անգլիացոց, Ամերիկացոց եւ կամ Չինացոց մէջ: Աօրկա զարգացումի պայման մը կը նկատեն: Ճիշտ այս սկզբունքով է որ կը հիանան, զոր օրինակ, մեր երջանկայիշատակ նախահայրերուն յօրինած պատուական շարականներէն ումանց վրայ, եւ կը խորհին զանոնք դնել իրենց երգարաններուն մէջ: Գէ՞ջ կ'ընեն այս սկզբունքին հետեւելուն համար:

ՅՈՒՆՆ. Ս. ԱԼԻՔՍԱՆԱՆՆ

Ապակիէ հայելին տառջին անգամ վեներտիկի մէջ շինուեցաւ 1,300ին: Հայելին չգտնուած փայլուն մետաղներ կը գործածուէին իբր հայելի :

* Աշխարհի ամկախ կամուրջներուն մէջ ամենամեծն է Նիւ-Եորքի եւ Պրուքլինի միջեւ գտնուած Էստիմուրջը. որուն երկայնութիւնն է 5,980 ոտք, եւ բարձրութիւնը՝ 135 ոտք: Այս կամուրջին շինութիւնը 1870ին սկսած է եւ 13 տարուան մէջ աւարտած է 3 միլիոն անգլ. ոսկի ծախքով:



ՈՒՂԵՒՈՐԱԿԱՆ ՏՊԱՒՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՆՊԵՐՆԵՐԸ, ՄՕՆ ՊԼՈՅԸ, ՀԻՄԱՅՈՒՆՆԵՐԸ

Լեռները, ամէն մարդու համար սիրելի են, մանաւանդ անոնց համար, որոնք քաղաքի մը փողոցներէն չե՛ն հեռացած բնու եւ կամ թէ իրենց տեսութեան հորիզոնը կ'ընդգրկէ դաշտի մը համայնապատկերը: Լեռները, որոնք ցցուած իրենց գլուխները վեր կը բռնեն, միշտ հմայիչ բնութիւն մը ունին և հաւասարապէս կ'ազդեն՝ նամանականդ անոնց վրայ, որոնք բնութեան այդ մասերէն մասնաւոր համ մը կ'առնեն: Լեռներէ շատեր, ինչպէս Հիմալայա և Սինա, շատ մեծ դեր մը խաղացած են: Հիմալայա, իր չքեղ ու ամպածրար գագաթներով եւ ձիւնապատ զըլուխներով՝ հնդկական ժողովուրդին մէջ մեծին եւ անհունին գաղափարականը արթուն պահած է միշտ. եւ արեւելքի այդ ժողովուրդը իր գլխուն վրայ բարձրացող այդ հսկայ երկրի զանգուածին համեմատած է չոր այն մտքի արտադրութիւնները, որոնց մէջ անոր ունեցած խորհրդաւոր ազդեցութիւնը ա՛յնքան որոշ եւ յստակ կը տեսնուի: Վէտայական երգերուն մէջ իսկ անոր ազդեցութիւնը էւ մեծ ու անհուն ներգործութիւնը կը տեսնուի, և որոնք կարծես աւելի ազդեցիկ բնութիւն մը կ'առնեն ու նոր հոգիով կը պծնուին: Հիմալայա հնդկական ժողովուրդին զրականութեան, լեզուին սճին վրայ իսկ մեծ ազդեցութիւն գործած է, որոնց մէջէն կարելի է դուրս հանել ամբողջ լեռներու բարձրարեւրձ այն շղթան որ Պուտտայի հայրենիքին մեծագոյն հմայքը կուտայ եւ տուած է:

Ոլիմպեան կատարները, ոչ նուազ խոշոր ազդեցութիւն մըն են ունեցած, որոնք յաւէտ իրեւ բնակավայր աստուածներու, զիցուհիներու, քաջերու եւ դիւցազներու, հսկայ ներշնչարանը եղած են յունական այն մեծ բանաստեղծութեան, որ Իլիական կը

կոչուի, եւ ուր այդ կատարները, իրենց աստուածներով ի հանդէս կուգան, յաղթականի մարտը մղելու համար Տրովադայի այն քաջամարտիկներուն դէմ, որոնք նոյն ներշնչումը եւ նոյն քաջութիւնը ընդունած էին անոնց այդ ժամանակի աստուածներէն: Հրէական աշխարհին մէջ, Թափորական լեռները, Սինաի բարձունքը, Հերմոնի կատարները իրենց հիանալի գրուածները ունին, որոնք գեղեցկորէն կը պատկերացնեն Հրեայ ժողովուրդին կեանքի այս կամ այն մասը, ու մանաւանդ Սինան, ուր Եհովայի շանթը կը փայլատակէ, անոր կայծակները կը շողան, իր ամպերը կը գոռան, հոգեզէն էակներ կը գոռան, իրենց ծնծղաները կը հնչեն ու անոր թափափիկ կեանքին ամէնէն սիրուն մէկ հատուածը կը պատկերացնեն: Սինա այդ ժողովուրդին փառքը ներկայացնող բարձունքն է եղած, ինչպէս Գորազինը յետոյ եղաւ Սամարացիներուն սրբավայրը, ուր կը բարձրանային իրենց ուխտը եւ երկրպագութիւնը ընելու համար, Եահվէի, որ իրեն բնակավայրը ընտրած էր, իրենց կարծիքով, այդ վայրը, իրեւ սուրբ եւ նուիրական վայր մը, ուր մարդկային աղտոտ գործեր իրենց ապականութեան բիծը հոն չէին տարած տակաւին: Եւ պարսկական ժողովուրդը, նոյնպիսի վայրերու վրայ երկրպագութեան նոյն արարողութիւնը կը կատարէր, առտուն վարդամատն արշալոյսի ոսկի ճաճանչներուն փայլատակումներուն տակ խոնարհելով արեւու աղամանդ սկաւառակին առջեւ, ուրկէ կը բղխէր բնութեան ամբողջական բարութիւնը եւ կենդանութիւնը:

Քրիստոնէութեան մէջ իսկ լեռներէ ոմանք իրենց պատմութիւնը ունին. լեռան մը վրայ Քրիստոս կ'այլակերպի եւ այսպէս նոր նուիրագործում մը կ'ընդունի Թափոր. ուրիշ կատարի մը վրայ խոյի մը լուսաւէտ երեւումը տեսնել կարծեց հաւատացեալ աչք մը: Կրօնքներու լեռները կը սիրեն միշտ:

Կեանքիս մէջ կատարած բոլոր ուղեւոր-

րութիւններու միջոցին, Չուիցերիոյ եւ եւրոպեան զանազան երկիրներու մէջ, բնութեան տեսարաններէն ամէնէն աւելի զգածուած եմ բարձր կատարներէն, որոնք միշտ եւ շարունակ մեծ եւ բարերար տպաւորութիւն մը գործած են. սե՛ս՝ այս պատճառաւ, ամէն անգամ որ առիթը ունեցած եմ, ելած եմ կատարի մը գլուխը, անոր բարձրութենէն, սիրունութենէն, ցցուած կեցուածքէն հմայուած, որուն կատարէն ա՛յնքան հիանալիօրէն կրնաս դիտել շուրջդ: Այդ լեռները մարդուն մէջ հոգեկան բարձրացում մըն ալ յառաջ կը բերեն. որքա՛ն հանճարներ անոնց տպաւորութեան տակ հմայուած, արտադրած են ամէնէն ապրող գլուխ գործոցները: Ո եւ է մարդ, պէ՛տք է որ ամէն անգամ երբ կը ներկայանայ առիթ մը, ելլէ բարձունքի մը վրայ, զոր օրինակ Ալպեաններու կատարները, որ ատեն պիտի գգայ թէ հոգեկան բարձրութեան մը սահմաններուն ալ կարողացած է փամանել իր զգացումներով, հոգիին թռիչքներով: Այդ ձիւնապատ կատարները ազնուացնող բնութիւն մը ունին կարծես. հոգ չէ թէ անզգայ երեւան արտաքնապէս. հմայող բան մը ունին անոնք, որմէ մենք կ'ազդուինք, նման այն աչքերուն

որոնց մէջ երկար դիտելէ յետոյ կը հմայուի մարդ: Կ'արժէ՛ ամէն պատեհ առիթի մէջ անպատճառ վերելք մը ունենալ դէպի Ալպեանները, ՄօնՊլան, կամ Չուիցերիոյ ու է մէկ լեռը: Իրա՛ւ, զժուար է անոնց ճամբաներու ընթացքը, բայց անգամ մը երբ մարդ հասնի՝ բնութեան այդ կատարները՝ լիաթոք կը շնչէ աստուածներու յատուկ օդ, ուր ամպերը կուգան իրենց հովանին տարածել, արեւը իր ոսկի ճառագայթները կը զրկէ ուղիսօրէն. ալ անկէ վերջ հոնկէ բաժնուիլ ոչ ոք պիտի ուզէ. հոն իւրաքանչիւր ոք պիտի սիրէ բնակիլ. սուրբ օդերու բնակիչ ըլլալ պիտի փափաքի: Դէպի Ալպեաններու գագաթ մը վերելքը իր մասնաւոր հրապոյրը ունի, զոր եւ ոչ մէկ որիչ բան կրնայ տալ մարդուն. ան կը նմանի կեանքի զժուարութեանց մէջէն որ եւ է հոգեկան փափաքի մը հասնելուն: Եւ ստուգիւ մարդկային կեանքն ալ տեսակ մը վերելք է, զոր մարդ պարտաւոր է կատարել, որովհետեւ ան մարդուս առջեւ կը պարզէ իր մեծութիւնը, հոգիին ազնուացումը եւ զգացումներուն բոլոր թրթռումները:

ՉՍՐԼՍ ՄԱՔՈՒՅԼ

ՉԵՐԶԵՆ ԽՕՄԲ ՍԸ

Բիւրակնի 46րդ թիւով հրատարակած էինք, մականուններու սկզբնատառերով, ցանկը այն բաժանորդներուն, որոնք ցարդ անվճար ձգած էին իրենց բաժանորդագիրը: Անոնցմէ հազիւ մէկ քանի հոգի միայն պատասխանած են, և միւսները կը մնան իրենց ուխտեալ լռութեան մէջ:

Չենք գիտեր թէ, ի՞նչ կերպով կրնայ մեկնուիլ այս լռութիւնը, երբ տարին ամբողջ իրենց ստացած թերթին փոխարժէքը վճարելու պահանջումը կ'ընենք:

Վերջին անգամ մըն ալ կը յիշեցնենք անոնց՝ այս պարագան, եւ կը խնդրենք որ, հաճին փութացնել իրենց պարտքը, ամենակարճ ժամանակի մէջ՝ որ կարելի է:

Կը յուսանք թէ, մէկ քանի շարթուան ընթացքին, անոնք վերջնականապէս կը կարգադրեն իրենց այս հաշիւը: Իսկ եթէ զարձեւալ չպատասխանեն, չենք գիտեր պէ՛տք է հրատարակել իրենց անունը ամբողջապէս, քանի որ կ'երեւայ թէ չեն հասկնար ո՛րո՛ւ ուզողուիլ այն կոչելուն, զորս կը հարկադրուինք ակամայ ու ի մեծ ցաւ մեզ՝ կրկնել:

Շ Ա Բ Թ Ո Ւ Ա Ն Ն Օ Թ Ե Ի

Աղեքսանդրոսը մէջ վերջերս յանկարծամահ եղեր է հոչակաւոր աշուղ մը, Համբո, որուն բուն անունն է Համբարձում Աղամեան: Համբո 37 տարեկան էր եւ քսան տարիէ ի վեր աշուղ էր, առաջին օրէն իսկ նշանաւոր հանդիսանալով: Աչազօրիկ, սակայն օժտուած էր թանկագին յատկութիւններով, — սուր լսողութիւն և յիշողութիւն, գերազանց ճաշակ, — այնպէս որ արժանաւոր համբաւ եւ համակրութիւն կը վայելէր ամբողջ կովկասի մէջ: Պատանեկան հասակէն իսկ գերազանցած էր իր վարպետ աշուղները շնորհիւ իր ուշիմութեան, որով ամէն բան մէկ անգամէն կ'ըմբռնէր և կ'իւրացնէր: Միևնոյն ատեն առաջնակարգ յանկարծարան եւ անման ջութակահար էր: Աղեքսանդրոսը մէջ ամէն մարդ կը յարգէր զինքը եւ Համբո ամէն տունէ կը հրաւիրուէր, իր օրտաբուզիս երգերով եւ զմայլելի նուազով ներկաները խանդավառելու համար: Իր ծննդավայրէն դուրս ալ համբաւ շահած էր եւ կարսէն, Պաքուէն, Պաթումէն եւ ուրիշ քաղաքներէ խանդավառութեամբ կը հրաւիրուէր եւ կը պատուուէր: Աշուղ Համբո մեծ ոգեւորութեամբ երգած է Գէորգեան ձեմարանի Զճամեակին առթիւ, կարգադիր մասնախումբին հրաւերով էջմիածին երթալով: Վերջերս Գերմանիայէն ալ հրաւիրուած էր Հայերամշտութենէն կտորներ ներկայացնելու համար: Հանգուցեալը ճարտարութեամբ կը նուագէր կարգ մը գործիքներ և վրայ իսկ ջութակահարութեան մէջ այնքան առաջնակարգ մասնագիտութեան տիրացած էր որ, կը հիացնէր ամէնէն իստապահանջ վարպետն իսկ: Անման ընդունակութեամբ մը կը զարնէր նաւ եւրոպ. եզանակները: Համբոի մահով Աղեքսանդրոսը երկու առաջնակարգ աշուղ կը կորսնցնէ մէկ տարուան մէջ. իրմէ քիչ առաջ մեռաւ նաեւ ուրիշ աշուղ մը, Անտոն Անտոնեան, որ ծանօթ էր «Սիւրբ Անտոն» յորջորջումով:

×

Ծերունի ուսուցիչ մը, Սիմոն Ֆելէկեան, որ ատենով բանաստեղծի անուն ալ ունե-

ցած է, ինչպէս առանձին վարժարան մը՝ Սկիւտարի մէջ, ժամանակէ մը ի վեր գրեթէ գործէ քաշուելով: Եգիպտոս կը բնակէր, եւ կ'ապրէր Պօղոս Նուպար փաշայի օգնութեամբ: Վերջերս Գահիրէի մէջ փողոցէ մը անցած պահուն կ'օտքի մը տակ երթալով գետին տապալեր է, եւ թէպէտ գերմանական հիւանդանոցը փոխադրուեր է, սակայն մէկ քանի օր վերջը մեռեր է: Պօղոս Նուպար փաշա իր զաւկին հետ ներկայ զըտուներ է յուղարկաւորութեանը, եւ մարմինը ամփոփուեր է, Մարմինայի գերեզմանատան մէջ, Նուպարեան գերզատանին յատուկ դամբարանը: Հանգուցեալին երկու աղջիկները դերասանուհի են եւ բաւական հռչակ գտած են: Տատեան ընտանիքին գըլխաւոր անդամները իր աշակերտուհիներն են: Մասնակցած է Պատրիարքարանի ժողովներուն ալ:

×

Պարտիզակի բարձրագոյն վարժարանին շրջանուարտներէն Պ. Յովհաննէս Պէրպէրեան, որ երկու տարի առաջ Պօլսոյ ամերիկեան հիւպատոսարանին կողմէ Ամերիկա զորկուած էր մեքիմագիտութիւն ուսանելու, իր ճիւղը յաջողապէս աւարտելով, այս շարթու ուղեւորեր է Եգիպտոս, իբրև consuling engineer, ներկայացնելու համար ամերիկեան արտածիչ կարեւոր ընկերութիւն մը: Զանազան շոգեշարժ եւ ջրհան մեքենաներու մեքենականութեանը հմտանալէ զատ, Պր. Պէրպէրեան ուսած է նաև արդէզեան ջրհորները բանալու արուեստը, որուն համար մասնաւորապէս, ինչպէս նաև Նեղոս գետի օփերը ջրարաշխական մեքենաներով ոռոգելու պաշտօնով՝ ներկայիս վարձուեր է տեղին կառավարութեան կողմէ:

×

Ազգութեամբ Հրեայ բանասէր մը, Շէֆթուլիվից, գերմաներէն բանասիրական եւ լեզուաբանական հանդէսի մը մէջ հրատարակած է ուսումնասիրութիւն մը, հայերէն լեզուի վրայ: Այս նոր հայերէնագէտը՝ որ

աշակերտած է Բրոֆ. Սալաթեանցի, հաւաքած է հին հայերէնի ձայնագիրտութեան մասին նիւթեր, որոնցմով կը լուսաբանէ այլեւայլ եւ նոյն իսկ մինչեւ հիմա տակաւին անձանօթ մնացած հայերէն լեզուի ձայնական օրէնքներ: Սակայն կը հաւաստուի թէ, Պր. Շէֆթուլէվիցի ստուգարանութեան մէջ եթէ կան շատ մը բառեր, որոնք իր քըննութեան արդիւնքն են, կան նաև բառեր, որոնց ստուգարանութիւնը ուրիշներուն միջոցաւ կատարուած է: Այս նոր հայերէնագէտը Հիւալլմանի կը հետեւի եւ Բէթէրսընի

կարգ մը մեկնութեանց անհամարիտ կը գտնուի:



Աւեսաբեր՝ նախորդ շարթու բոլորեց իր հրատարակութեան Յիսնամեակը, եւ այս առիթով հրատարակեց «Յորելեանի Թիւ» մը, ճոխ ու ընդարձակ, պարունակելով յօդուածները բազմաթիւ ծանօթ անձնաւորութեանց, ամէնքն ալ ընթեռնլի նիւթերու վրայ: Կը շնորհաւորենք Աւեսաբերը՝ լրագրական գործունէութեան իր այս Յիսնամեայ Յորելեանին առթիւ, եւ կը մաղթենք յաջողութիւն, իր արդիւնաւոր ձեռնարկը շարունակելու:

Պ Ա Տ Ե Ր Ա Ջ Մ Ը

ՔՈՐԹ ԱՐԹԵՐԻՔ ԱՆԿՈՒՄԸ

Շթօսէլ եւ Նօկի զօրավարներուն Սուրիչի մէջ հանդիպումը, մեծ շահեկանութիւն մը ունէր, թէ՛ անձնական եւ թէ քաղաքական տեսակէտով:

Սալորենիներով չըջապատուած այն խորճիթը, ուր տեղի ունեցաւ տեսակցութիւնը, եւ ուր նաև ստորագրուեցաւ Գչ. օր անձնատրութեան պայմանագրութիւնը, պատմական պիտի դառնայ: Անվիաս մնացած միակ տունն է Սուրիչի մէջ, որ չինական բնատիպ գիւղակ մըն է ցած եւ տծիւ տընակներովը: Գիւղը երկու բանակներուն միջեւ գրեթէ ճզմուած էր, և հիմա սլարգապէս աւերակներու շեղջ մըն է:

Որճիթին մօտիկը կա՛յ բաց միջոց մը, ճամբուն մակերեսէն վեր բարձրացած, ուր թաղուած են քսանէ աւելի ճարտնցի զինւորներու զանազան անդամները: Դէպի հիւսիս տանող ճամբուն մէկ-երկու կէտերուն վրայ, այն քարէ դէգերուն միջեւ, որոնք երբեմն մարդկային բնակարաններ էին, թըմբած կեցած էին քանի մը խումբ զինուորներ, ձեռքերնին գրպաններն: Եւ ուրիշներ թաղուած ճարտնցի զինուորներուն կտորուանքները դուրս կը հանէին:

Այս մելամաղձիկ տեսարանին վրայ եկաւ ահա զօրավար Շթօսէլ Բորթ-Արթիւրէն, յունվար 5ի առտուն ժամը 11¹/₂ին: Գորշ եւ կապոյտ համազգեստներով տասերկուքի չափ ձիաւորներու ուղեկցութեամբ, կը հետեւէր դէպի արեւմուտք տանող ճամբուն հովտին երկայնքը: Իր հսկայ կերպարանքը ծածկուած էր թեթեւ գորշ վերարկուով մը, եւ երեսն ալ կիսովի կը ծածկուէր իր զինուորական գլխարկին տակ: Առաջին տեսքին՝ Քիզիքական մեծ ուժով մարշու մը տպաւորութիւնը կը թողուր, բայց ո՛չ այնքան խեղացի: Գիւղացի ոռսի մը երեւոյթը կ'ընծայէր, իր նմաններուն շատերէն աւելի կոկիչ:

Քանի մը շարունցի զինուորներ, որոնք զիպուածսլ հոն կը գտնուէին, բերանաբաց Շթօսէլի երեսն ի վեր կը նայէին, անոր անակնկալ ներկայութենէն ապշած: Զօրավար Շթօսէլ Սուրիչի աւերակներուն մէջէն քալեցուց իր ձին, եւ Սալորենիի Որճիթին զրան առջեւ ձիէն իջաւ:

Որոշեալ ժամանակէն մէկ ժամ առաջ կը հասնէր եւ երկրորդական սպայ մը կար

միայն զինքը ընդունող: Սակայն այդ սպան պակաս բան չթողուց, եւ քաղաքավարութեամբ հրամցուց ոուս հրամանատարը յարդածածուկ խրճիթին մէջ: Դրան վերի կողմը ճարտունեքն արձանագրուած էր. — «Հաշտութեան առաջնորդող դուռն է աս»:

Ժամը 11¹/₂ին զօրավար Նօկի հիանալի աշխէտ ձիու մը վրայ նստած, գիւղը մըտաւ, ճշմարիտ ձիաւորի մը բովանդակ վայելչութեամբ ձին խաղցնելով դէպի շէնքը: Հինգ հոգի կ'ուղեկցէին իրեն:

Զօրավար Նօկի նախ եւ առաջ իր խընդութիւնը յայտնեց հանգիպելուն համար հրամանատարի մը, որ ա'յնքան քաջութեամբ կռուեցաւ իր կայսեր համար, եւ զօրավար Շթօսէլ հաւասար քաղաքավարութեամբ պատասխանեց թէ, ուրախ է պաշարող Բանակին դիւցազնը տեսնելով:

Սառը այսպէս կոտրելով զօրավար Նօկի ժամանակ չկորսնցուց՝ վստահեցնելու համար իր այցելուն թէ, Միքատոյին բաղձանքին համաձայն բոլոր ոուս սպաներուն պիտի արտօնուի պահել իրենց զէնքերը: Զօրավար Շթօսէլ ակներեւ անկեզմութեամբ իր երախտագիտութիւնը եւ շնորհակալութիւնը յայտնեց այս կայսերական բարեհաճութեան համար: Իր ընտանիքին պատիւը, ըսաւ, հիմա փրկուած է. եւ իր սերունդները պիտի գնահատեն իրեն եղած այս քաղաքավարութիւնը:

Երկու սպաները յետոյ սկսան խօսակցիլ վերջին գործողութիւններուն զանազան մասերուն վրայ. և մանաւանդ վերջին մասին վրայ, որ անձնատրութեան առաջնորդեց: Զօրավար Շթօսէլ յայտարարեց թէ Սունկսուչանի առջեւ դրուած մեծ ականին պայթիւնը փճացուց բերդին ամբողջ պահակազօրքը:

Ամէն գովեստէ վեր է, ըսաւ, ճարտական հրետանիին կատարած գործը: Շթօսէլի մասնաւոր հիացումը դրուեր է մանաւանդ նոյն հրետանիին համախումբ կրակին ճշգրտութիւնը Սունկսուչանի վրայ պայթուէն վերջ: Գործողի ճարտարագէտները

եւ արդարեւ սպասարկութեան բոլոր ճիւղերը ա'յն տեսակ գործ մը տեսան, ըսաւ, որ հիացում կ'առնէ:

Բաժնուելէ առաջ, երկու պետերը եւ իրենց ուղեկիցները միասին լուսանկարուեցան: Երբ անշարժ կեցած էին ֆօսաֆին առջեւ, կը տեսնուէր թէ սոսկալի կռիւը անձկութեան եւ մտաւոր տառապանքի ի'նչ խորունկ նշաններ գրոշմած էր զօրավար Շթօսէլի դէմքին վրայ: Բայց ո'րքան որ մտազբաղ էր, կրցաւ զուարթ ձեւանալ իր յաղթականներուն առջեւ: Գալով զօրավար Նօկիի, ամէն ժամանակէ աւելի երիտասարդ և աւելի կորովի էր Յաջողութիւնը երիտասարդացուցած էր զայն:

Զօրավար Շթօսէլ իր երկու կողմին վերայ շարուած ճարտնցի զինուորներուն ողջոյններուն միջեւ Բորթ-Արթիւր մտաւ: Զօրավար Նօկի ալ քիչ մը վերջը'նաց բերդերը աչքէ անցնելու:

ՔԱՂԱՔԻՆ ՊԱՐՊՈՒԻԼԸ

Բորթ-Արթիւրի պարպուիլը կարելի եղածին չափ արագութեամբ տեղի կ'ունենայ: Երկու հազար սպայ մեկնեցան բերդաքաղաքէն: Ոմանք նախամեծար համարած են ճարտական բանտ մը իրենց զօրքերուն հետ, մինչ ուրիշներ օգուտ կը քաղեն Չարին իրենց տուած թոյլտուութիւնէն, պատուոյ խօսք տալով ազատ արձակուիլ: Կ'ըսուի թէ Չարը պատասխանելով զօրավար Շթօսէլի վերջին սրտածմլիկ հեռագիրին, շնորհակալութիւն յայտնեց է «քաջամարտիկ պահակազօրքներուն, իրենց «քաջարի պաշտպանութեան» համար:

Դերիները քաղաքէն դուրս պիտի հանուին օրական 5000 չափով: Գալով զօրավար Շթօսէլի, զօրավար Նօկի խնդրեց իրմէ որ Բորթ-Արթիւր մնայ, մինչև որ իր եւ իր ընտանիքին Ռուսիա վերադարձին համար պատրաստութիւնները աւարտին:

Բորթ-Արթիւրի ոուս սպաններուն հարիւրին յիսունը որոշեցին իրենց մարդոց ընկերանալ դէպի բանտ: Բերդերուն հրամա-

նատար զօրավար Սմիրնով այս վերջիններուն մէջ է, ինչպէս նաև չորրորդ զօրաբաժնին հրամանատար զօրավար Ֆօք, որ կ'ըսէ թէ ճարոն պիտի երթայ իր մարդոց մարզանքին հոգ տանելու: Հինգ ծովակալներէն մէկը, որ իշխան մըն է, գերութեան սրողում տուաւ:

Զօրավար Շթօսէլ եւ պատուոյ խօսք տուող միւս սպաները իրենց ընտանիքներով ընդամէնը գրեթէ հազար հոգի, նակազաքի կը սպասուին մօտերս, ուր քիչ մը հանգիստ առնելէ վերջը՝ իրենց հայրենիքը պիտի զրկուին:

ԽՐԱՆՃԱՆՈՒԹԻՒՆԸ ԹՕԲԻՈՅԻ ՄԵՋ
ԾՈՎԱԿԱԿԸ ԹՕԿՈՅԻ ՃԱՌԸ

Յունվար 7ի օրը, Թօքիոյի Քաղաքապետը եւ 80 հազար քաղաքացիք հաւաքուեցան Հիպիա Դարաստանին մէջ, Բորթ-Արթուրի անկումը տօնելու, Սանդավառ հուբաներ արձակուեցան Կայսեր, Բանակին եւ Նաւատորմին համար, նաև Թոկօ եւ Քամիմուրա ծովակալներուն համար, որոնք ինչպէս նաև պատերազմական եւ ծովային նախարարները, կարճատու բանախօսութիւնները ըրին շնորհակալութիւն յայտնելով ժողովուրդին՝ իրենց ծառայութեան այս հանրային երախտագիտութեան համար: Ծովակալ Թօկօ համեստ ակնարկութիւն մը ըրաւ ա՛յն դերին, զոր իր նաւատորմը կատարեց Բորթ-Արթիւրի պաշարման առթիւ, եւ պաշտող բանակին քաջութեան խանդավառ գովեստ կարգալէ ետքը, իր հաստատ սրողումը յայտնեց գործադրելու կայսերական բաղձանքները, եւ աղքին բարեացակամութեան արժանանալու յառաել ուժգընութեամբ եւ կորովով թշնամիին դէմ: Ծովակալները դափնի մը տնկեցին Դարաստանին մէջ Քաղաքապետին խնդրանքով: Դումարումը ցրուեցաւ պատերազմին համար անօրինակ խանդավառութեամբ:

* Ճարոնական կառավարութեան հասնելիք չորրորդ պատերազմական փոխառութիւնը հարիւր միլիոն եեճ պիտի ըլլայ:

ԶՕՐԱՎԱՐ ՆՕԿԻԻ ՏՊԱՆՈՐՈՒԹԻՒՆԸ
ԻՐ ԶԱՌԱԿՆԵՐՈՒՆ ՄԱՀՈՒԱՆ ՎՐԱՅ
ԻՐ ՄԵԿ ՔԵՐԹՈՒԱԾԸ

Յայտնի է թէ Զօրավար Նօկիի երկու զաւակները մեռան պատերազմի դաշտին վրայ: Ուշագրաւ է այն տպաւորութիւնը, զոր յայտնած է ճարոնցի մեծօգի զօրավարը, երբ իրեն հաղորդուած է անոնց մահուան լուրը:

Զօրավար Նօկի պատասխանած է.— «Հպարտ կը զգամ ինքզինքս ո՛ր զաւակս իբր քաջ մեռաւ: Ատիկա ամենամեծ պատիւն էր, որ կրնար ըլլալ մեր սերունդին»:

Զօրավար Նօկիի երկրասիրական բանաստեղծութիւնները մեծ ժողովրդականոնութիւն կը վայելէն ճարոնի մէջ: Այս օրերս ժողովուրդին բերանն է իր մէկ քերթուածը, նուիրուած մեռած զաւակին յիշատակին:— «Զաւակս մեռաւ թշնամիին դէմ մաքառելով:— Մի՛ լաք անոր վրայ:— Ինչո՞ւ լալ:— Արցունքները խղճի խայթին փրկանքն են:— Մարդ խղճի խայթ չունենար, երբ հայրենիքին համար կը մեռնի:— Զաւակս մեռաւ թշնամիին դէմ մաքառելով»:

* Ծովակալ Ալէքսիէվ ռուսական ամբողջ տորմիլդին ընդհանուր հրամանատար անուանուեցաւ:

* Մուքտէնէն հասած հեռագիրներ կը ծանուցանեն թէ, ռուսական եւ ճարոնական բանակներուն միջեւ ընդհարումները կ'աւելնան և յուելի բուռն հանգամանք մը կ'առնեն:

Տե՛ր եւ Տե՛րեճ
Հ. ՍՏԵՓԱՆ Խ. ԻԻԹԻԻՃԵԱՆ
Տպագ. ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԱՆ
Պապը Ալի հասսէքի Իգսամ լրագրի՞ր դիմ քիւ 38

ԵՐԿՈՒ ԳԻՐՔ

ՔՐԻՍՏՈՆԵՍԻՓԵԱՆ ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆԸ

[ՅԵՏԵՒԻԼ ՅԻՍՈՒՍԻ]

Հեղինակ

CHARLES M. SHELDON

Թարգմանիչ

Վ. Յ. ՅԱԿՈԲՍԱՆ

Ամերիկացի համբաւաւոր հեղինակին այս կրօնական վէպը որ աննման յաջողութիւն մը ունեցած է, իր տեսակին մէջ միակ գործն է հայերէն լեզուով: Ուրախ ենք որ այս գիրքը մեր համայնքին մէջ ալ լաւ ընդունելութիւն գտաւ և արդէն վաճառուիլ երկրորդ հազարին հասած է:

Խնամեալ թարգմանութիւն մը, ընտիր թուղթ, մաքուր տպագրութիւն և գեղարուեստական կազմ մը այս գիրքին հրատարակուելու կ'աւելցնեն առանց յիշելու տարօրինակ կերպով աժան գինը

Միայն 5 դաիեկան

ԿԻՆՆ ԻՔՐԵՒ ՕՐԻՈՐԳ

Գերմանացի նշանաւոր Բրոֆէսէօր Հէռման ԳԼԷՆՔԷ, հոգեբան բժիշկը որ կէս դարու փորձառութիւն մը ունեցած է և որուն ուրիշ մէկ քանի գործերը արդէն ծանօթ են մեր հասարակութեան, մասնաւորապէս պատրաստած է այս գիրքը, այն նպատակով որ կարելի ըլլայ զայն ամէն աղջկան ձեռքը տալ իրենց բարոյական և Քիզիական ինքնակրթութեան միջոցները ճանչցունելու համար:

Հայերէնի թարգմանած է Մ. Կ. ՆԱԶԻԿԵԱՆ

Գինն է 10 դաիեկան

Կը ծախուի Կ. Պոլսոյ եւ գաւառներու բոլոր գրավաճառներուն հոյ

Կեդրոնասէղին է

(1—5)

Յ. ՄԱՏԹԵՈՍԵԱՆ ՎԱՃԱՌԱՏՈՒՆԸ

Ֆիլեմաննըշար, Պայպլ Հաուզ, ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

Թ Է Ե մի՛ գ ն է ֆ

ԱՌԱՆՑ ԱՆԳԱՄ ՄԸ ԱՅՅԵԼԵԼՈՒ



Կ. ԵՆԼՐՈՒԵԱՆ ԵՒ Յ. ԻՍԱԳՈՒԼԵԱՆ ՎԱՃԱՌԱՏՈՒՆԸ

Կ. Պոլիս, Ճէլալ Պէյ խանի սակ, քիւ 10

Ո Ի Ր Պ Ի Տ Ի Գ Տ Ն Է Ք

Կեիսով եւ զարդարուն սուփերով

եւ անհամեմատ աման զինով

ԱՄԵՆԱՑՈՒՄ ԻՐԹԵՐԲ ԻՐԸ

Հնդկաստանի, Ճափայի, Սէյլանի, Զինաստանի

Թ Է Յ Ե Ր Ո Ւ



Եւ մանաւանդ մասնաւորապէս ներածուած **Տարբերակային Թէյ**

ԳԱՒԱՌՆԵՐՈՒ ՄԷՁ ՄԵՐ ՎԱՃԱՌԱՆԻՇԸՐ ՓՆՏՈՒԵՑԻՔ

Բոլոր Թէյ Տարբերակներու քով

8-50

1905 Ի

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏԱՐԵՑՈՅՑԸ

Ն. Կ. Պերպերեան եւ Որդի Տպարանէն, յոյս տեսած է 1905 Տարիի Ժողովրդական Տարեցոյցը, շահեկան բովանդակութեամբ մը, գեղարուեստական կողքով ու մաքուր ապագրութեամբ:

Այս Տարեցոյցը, որ 11 տարիներու իր գոյութեանը մէջ, մեծ ընդունելութեան արժանացած է ընթերցող հասարակութեան կողմէ, այս տարի շատ աւելի ինամուած բովանդակութիւն մը կը ներկայացնէ, սլարունակելով զանազան յօդուածագիրներէ գեղեցիկ գրութիւններ եւ ընթեռնելի շատ մը կատարներ, զուարճալիքներ, ինչպէս լուսանկարը Քասիլին, եւ իրմէ դուրս մը: Գերազանցազէս զբօսեցողիչ է նաեւ Մ.

Գալէնտէրի Ակնիցիներու բարբառով մէկ պատկերը: Իւր բաշմակողմանի բովանդակութեամբ, Տարեցոյցը իսկապէս ժողովրդական գիրք մըն է, և պէտք մը ամէն անհատի: Գինն է 5 դրչ. ի հմտ. ք. մ. ս. մ. մ. մը, ինչ որ մատչելի կը դարձընէ Տարեցոյցը ամէն ընթերցողի: 7-10